14 ՄԱՐՏ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 45(4897)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

9 771829 165003 12045

# Տրամադրվածին էլ ի՞նչ տրամադրեն

## *Ադրբեջանի պաշտպանության նախարարը Իրանում*

Իրան է մեկնել Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը: Թեհրանում նա ասել է, թե «ոչ ոք չի կարող Ադրբեջանին տրամադրել Իրանի դեմ»: Եթե Իսրայելի վարչապետը չբացահայտեր, որ Միացյալ Նահանգները չի աջակցում Իրանին հարվածելու հրեական պետության ծրագրին, Սաֆար Աբիեւը կլիներ Թեհրանո՞ւմ, թե՞ Երուսաղեմում: Հավանաբար նրան հենց այդ երկմտանքով էլ Թեհրանում ընդունել են:

Ինչ վերաբերում է Իրանի «դեմ տրամադրելուն», ապա այստեղ Բաքուն բոլորովին այլ տեսակետ ունի: Այն պարզեպարզ հնչեցրել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի բաժնի վարիչ Ալի Հասանովը, որի կարծիքով Իրանում «40 միլիոն ադրբեջանցի է ապրում», եւ Բաքվում չեն ցանկանում, որ իրենց «եղբայրների գլխին ռումբեր պայթեն»: Ստացվում է, որ եթե Իրանում ադրբեջանցիներ չապրեին, ապա Իլհամ Ալիեւի վարչախմբի համար հարեւան երկրի ճակատագիրը որեւէ հետաքրքրություն չէր ներկայացնի:

Բայց տվյալ դեպքում պաշտոնական Բաքվի հայտարարություններում խիստ անհամաձայնություն կա: Բանն այն է, որ Իրանում «40 միլիոն ադրբեջանցիների ապրելու» մասին ընդգծումն արդեն իսկ վկայում է, որ Ադրբեջանն իր հարեւանի հանդեպ կանխատրամադրված է: Քանի որ այդ կերպ Իլհամ Ալիեւի ներկայացուցիչը կարծես թե ակնարկում է, որ Իրանում բնակվող էթնիկ ադրբեջանցիների ճակատագիրն ավելի շատ պաշտոնական Բաքվին, քան թե Թեհրանին է հուզում: Գաղտնիք չէ, որ Բաքվում հաստատված տոնացույցի համաձայն դեկտեմբերի 31-ը հռչակված է «աշխարհի ադրբեջանցիների համերաշխության օր»:

1989թ. դեկտեմբերի 31-ին Նախիջեւանի հատվածում ավերվել է խորհրդա-իրանական սահմանը, եւ տասնյակհազարավոր մարդիկ, անցնելով Արաքսը, «միավորվել են իրենց եղբայրների հետ»: Նման խայտառակ փաստի բարձրացումը պետական-համազգային տոնի մակարդակի վկայում է, թե որքանով է Ադրբեջանը «չեզոք» վերաբերվում հարեւան երկրի ներքին խնդիրներին: Ասվածին թերեւս արժե ավելացնել նաեւ, որ «համերաշխության օրվա» առթիվ պարտադիր տարածվում է Ադրբեջանի նախագահի՝ աշխարհի բոլոր ադրբեջանցիներին հղված դիմումը, որտեղ նա իրեն նույնացնում է «նրանց առաջնորդի հետ»:

Նախանցյալ տարվա այդ ուղերձն այնքան անպատշաճ էր, որ Իրանի խորհրդարանի ազգությամբ ադրբեջանցի մի խումբ պատգամավորներ ստիպված եղան Իլհամ Ալիեւին ցույց տալ իր իսկական տեղը: Չպետք է տեսք ընդունել, ինչպես Բաքվում են անում, թե նման «մանրուքները» մոռացվում են: Ընդհակառակը:

Այսօր ադրբեջանական կողմի «կառուցողականությունը» մի պատճառ ունի. Բաքվում հասկանում են, որ Իրանի դեմ բացահայտ թշնամական գործողությունները կարող են կործանարար լինել հենց Ադրբեջանի համար: Իլհամ Ալիեւը պարզապես չի կողմնորոշվում, թե ինչ ուղղությամբ են իրադարձությունները զարգանալու Իրանի շուրջը: Նա տեղեկացված չէ, ուստի ընտրել է «կառուցողականության» տարբերակը: Իրականում Ադրբեջանն ամեն պահ սպասում է, որ Իրանը «խորտակիչ հարված ստանա»: Բաքվում կարծում են, թե Իրանը շահագրգռված չէ «ուժեղ Ադրբեջանի ներկայությամբ», ուստի իրենք էլ ամեն ինչ անում են, որ Թեհրանը «մշտապես անհանգիստ լինի»:

Սա է իրանա-ադրբեջանական հարաբերությունների ներկայիս պատկերը: Եվ նման իրավիճակում ավելորդ է ասել, թե «ոչ ոք չի կարող Ադրբեջանին Իրանի դեմ տրամադրել»: Քանի որ արդեն իսկ տրամադրվածին էլ ի՞նչ տրամադրեն: Խնդիրն այն է, որ իրանական կողմը, հակառակ Բաքվի սպասելիքների, բավական սառնասրտորեն է գնահատել պահը եւ կանխարգելիչ քայլերով հասկացրել, թե ով կարող է իրականում տուժել, եթե ֆորս մաժոր առաջանա:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Քաղաքական աճպարարության ժամանակը

Քաղաքական ուժերի գլխավոր հոգսն այժմ ընտրացուցակները «ով ավելի խայտաբղետ եւ էքսցենտրիկ» սկզբունքով կազմելու վարպետություն ցուցաբերելն է: Այս իմաստով բոլորից հետամնացն էլի ՀԱԿ-ն է լինելու կարծես, որտեղ ամենից «խուրդվող» կերպարները Լյուդմիլան ու Նիկոլն են, անգամ Ջհանգիրյանն այլեւս չի կարող հավակնել ամենից բարձր գոռացողի տիտղոսին, քանի որ իշխանական ցուցակներից ամեն մեկում Տորք Անգեղի բամբ ձայնով մեկական թեկնածու առնվազն ընդգրկվելու է: Իսկ հատուկ խորհրդարանական աշխատանքի համար տարիներ բեմերում մշակված ձայներով պատգամավորացուներ, ցավոք, ՀԱԿ-ի ցուցակում չեն լինի, նույնիսկ հայտնի բռնցքամարտիկ Հակոբկոխյանը չի լինի, քանի որ մեր աստղ-մաստղերը հո չե՞ն գժվել, որ անհեռանկար ընդդիմության ցուցակ գնան՝ չոր, առանց քյար, առանց «Լեքսուսի» ու Հյուսիսային պողոտայի բնակարանի: Իշխանական ուժերի ցուցակնե՛րն են յուղոտ ու մեղրոտ:



Ասում են՝ մեր բոլոր երգիչ-երգչուհիները, աստղաստղիկները դառնալու են իշխանական համամասնական ցուցակների զարդուզարդարանքը՝ նայողի արմանք-զարմանքն առաջացնելով քարոզարշավին, քանի որ տարիներով մեր էկրաններին այս կերպարները որպես հասարակության սերուցք ներկայացնելիս (եւ իսկական սերուցքին դուրս մղելիս) մեր «տելեշնիկները» կարգին քրտնել են ապագա որակյալ խորհրդարանի հերթափոխ պատրաստելու համար, հո նրանց ջանքերն ի դերեւ չե՞ն ելնելու: Շուշանն, օրինակ, ԱԺ պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահ կլինի՝ ո՞ւմ վերջը, որ մի հաս երգի «Ես մի զարկն եմ քո բազկի», պատգամավորները մշակութային նոկաուտ կստանան ու կքվեարկեն անգամ սեփական մոր դեմ ուղղված նախագծին կողմ. դե ՀՀԿ մտնելն էր պակասում, էն էլ մտավ:

*Տես էջ 2*

# Ըստ ամերիկացի գիտնականների՝ քաղցկեղի պատճառը ինքնաներշնչումն է

**Ամերիկացի մի խումբ գիտնականներ հաստատում են այն կարծիքը, որ բազմաթիվ ծանր հիվանդությունների պատճառը պետք է փնտրել մարդու հոգեբանության մեջ: Հյուսթոնում անցկացված հետազոտությունների ընթացքում ապացուցվել է դեպրեսիայի (ընկճվածության) եւ տեւական սթրեսի կապը ուռուցքային հիվանդությունների հետ: Այդ մասին հաղորդում է podrobnosti.ua կայքէջը:**

**Գիտնականները նշում են, որ դեպրեսիայի վիճակում արյան մեջ բարձրանում է պրոտեինի մակարդակը, իսկ հաճախ հենց պրոտեինն է արագացնում քաղցկեղային բջիջների զարգացումը եւ նպաստում է մետաստազների աճին: Երկարատեւ սթրեսի ու դեպրեսիայի դեպքում օրգանիզմում առաջանում է նորեպինեֆրին: Այդ նյութն արագացնում է չարորակ ուռուցքով արդեն վարակված բջիջների աճն ու բազմացումը:**

**Գիտնականները խորհուրդ են տալիս ավելի քիչ մտածել ծանր հիվանդությունների մասին եւ ուրախություններ գտնել կյանքում:**

# Ֆրանսուա Հոլանդը վերահաստատում է զորակցությունը Հայ դատին



**Մարտին 12-ին, Ելիսեյան պալատում նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ հանդիպելուց մեկ օր անց, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը ներկայացնող պատվիրակության անդամներ Միքայել Ղազարյանը (Լիոն), Պասկալ Շամասյանը (Մարսել), Ալեքսի Գյովչյանը, Մուրադ Փափազյանն ու Արա Թորանյանը (Փարիզ) հանդիպեցին Ֆրանսիայի Հանրապետության նախագահի թեկնածու Ֆրանսուա Հոլանդի հետ, վերջինիս նախընտրական կենտրոնակայանում:**

**Սոցիալիստ ընդդիմադիր թեկնածուն, ըստ Փարիզից Ժան Էսքիյանի լրատվության, վերահաստատել է նախապես արած իր հանձնառությունը Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու վերաբերյալ: Նա խոստացել է նախագահական մանդատ ստանալուն պես այդ ուղղությամբ կառավարական օրինագիծ ներկայացնել խորհրդարանի հաստատմանը: Նա հիշեցրել է Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի համար Եվրոմիություն մտնելու նախապայմաններից մեկը դարձնելու իր վճռականությունը: Ավելին, Հոլանդը խոստացել է ընտրվելու դեպքում պետական աջակցություն ցույց տալ Փարիզում 2015 թ.-ին Հայոց ցեղասպանության հիշատակի թանգարան կառուցելու հայոց ծրագրին: Միաժամանակ Հոլանդը խոստացել է հատուկ ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը զինված բախման չվերածելու խնդրին:**

**Հիշեցնենք, որ նախագահ Սարկոզին նախորդ օրը ավելի քան 50 հազար համակիրների առաջ ունեցած ելույթում կրկնել էր իր հանձնառությունը՝ պաշտպանելու հայ ժողովրդի հիշողության ցավը:**

**Այսպիսով՝ Հայոց ցեղասպանությունը դառնում է նախագահական երկու մրցակիցների քարոզչական արսենալի նյութ: Կունենայի՞նք այդ հնարավորությունը, եթե Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական չհամարեր խորհրդարանի վավերացրած օրինագիծը:**

# Մաշտոցի պուրակի հարցը կքննվի դատարանում

«**Ազգ**» օրաթերթը նախորդ համարներից մեկում գրել էր, որ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորներն ու Մաշտոցի պողոտայի մի շարք բնակիչներ 10 էջից կազմված հայցադիմում են ներկայացրել վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել քաղաքապետի որոշումները, որոնց հիման վրա այգին կառուցապատվում է:

Երեկ Քաղաքացիական գործերով վարչական դատարանն ընդունել է «Ժառանգության» պատգամավորների հայցը «Ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի»: Մինչ Մաշտոցի պուրակի հարցը կքննարկվի դատարանում, ակտիվիստները հերթապահում են այգում, որպեսզի այնտեղ շինարարությունը չշարունակվի:

Երեկ հերթական միջադեպն է տեղի ունեցել ակտիվիստների եւ ոստիկանների միջեւ: Ակտիվիստները վրան էին տեղադրել ցրտից պաշտպանվելու եւ գիշերելու նպատակով, սակայն ոստիկանները հայտարարել են, որ վրան տեղադրելու իրավունք չունեն եւ միայն տեղական ինքնակառավարման մարմինների թույլտվությամբ կարող են վրան տեղադրել:



Ակտիվիստներն էլ պնդում են, որ իրենց գործողությունները օրենքի սահմաններում են: Որոշակի բանակցությունից հետո ակտիվիստներին հաջողվել է պուրակում վրան տեղադրել: Բնապահպանները որոշել են, որ գիշերը 10 բնապահպան ակտիվիստներ կգիշերեն այգում: Թեպետ ոստիկանները համաձայնության են եկել ակտիվիստների հետ, սակայն մետաղյա արգելապատնեշները այգուց չեն հեռացրել: Ոստիկանության ներկայացուցիչների խոսքերով՝ պատնեշները շարել են, որպեսզի բնապահպանները չվնասեն կրպակները: Հիշեցնենք, որ բնապահպանները հայտարարել են, որ իրենք մասնավոր սեփականություն ջարդելու մտադրություն չունեն: Նրանք մինչեւ ուրբաթ օրը ժամանակ են տվել քաղաքապետարանին, որպեսզի տեղադրված կրպակներն ապամոնտաժվեն:

Հ. Հ.

# Կանխատեսումներ. ոստիկանները դարձյալ կկանգնեն ոչ թե լրագրողի, այլ՝ լցոնողի կողքին



*Ձախից՝ Արամ Աբրահամյան, Դավիթ Թումասյան*

2011 թվականին լրատվամիջոցների դեմ քաղաքացիական հայցերն անհասկանալիորեն ավելացան: Կարծիքին համամիտ է նաեւ փաստաբան **Դավիթ Թումասյանը**: Անցյալ տարի «Առավոտ» թերթի դեմ եղել է մեկ քաղաքացիական հայց, «Ժամանակ» թերթի դեմ՝ եւս 1 հայց, «168 ժամ»-ի դեմ՝ 4 հայց, եւ ամենաշատ հայցերն ուղղված են եղել «Հրապարակ» օրաթերթի դեմ՝ 6 հայց:

Դավիթ Թումասյանը, սակայն, ընդգծում է՝ հայցերի մեծ մասն ավարտվել են հաշտությամբ, ինչի համար հաճախ հիմք է դառնում դատական պրոցեսների ժամկետը, որը երբեմն մի տարուց ավելի է տեւում: Հետեւաբար, 2 կողմերը մի հայտարարի են գալիս եւ հրապարակում արդեն հերքման տեքստը:

Սակայն հերքումն էլ չպետք է շահարկվի: Օրինակ՝ լրագրողը կարող է գրել զրպարտություն ու վիրավորանք պարունակող հոդված, որը կհրատարակվի, իսկ հետո առանց երկար պատմության ու դատարան հասնելու՝ համաձայնության գալ հերքման շուրջն ու հրապարակել հերքումը:

Երեկ «Հենարան» ակումբում բացի փաստաբանից հրավիրված էր նաեւ «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Արամ Աբրահամյանը**, որի կարծիքով զրպարտության ու վիրավորանքի ապաքրեականացումից հետո սկսվեց հայցերի ալիքը. «Հիմնականում իշխանավորները, օլիգարխները, բայց ոչ միայն նրանք օգտվեցին, թե իրենց հայցերով կարող են այս կամ այն թերթը սնանկացնել»:

Թե ի՞նչ կանխատեսումներ կան նախընտրական շրջանի ու ընտրությունների օրվա վերաբերյալ, Արամ Աբրահամյանը պատասխանեց, որ ընտրությունների օրն ավելի վատ բան է սպասվում, երբ լրագրողները նկատեն ու նկարահանեն լցոնման դեմքերը, ապա լցոնող «հաստ վիզ ունեցողները կհարձակվեն լրագրողների վրա ու կխոչընդոտեն նրանց աշխատանքը, իսկ ոստիկանությունը կլինի նրանց, ոչ թե լրագրողների կողմը»: Սակայն նախընտրական արշավի ժամանակ, Արամ Աբրահամյանը կարծում է, զրպարտության ու վիրավորանքի առումով հայցերը չեն ավելանա: Իսկ լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ փաստաբանը եւս մեկ անգամ հիշեցնում է, որ դա քրեորեն պատժելի արարք է:

**Ի. Պ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# «Կանանց բժշկական օգնություն» մեկամսյակը մեկնարկել է

**Ավանդույթի համաձայն՝ Երեւանի քաղաքապետարանը այս տարի նույնպես մարտի 8-ից ապրիլի 7-ը անցկացնում է «Կանանց բժշկական օգնություն» մեկամսյակը: «Ազգը» մշտապես անդրադարձել է այդ կարեւոր ծրագրին ու ներկայացրել ողջ ընթացքը: Հիշեցնենք, որ անցած տարի այդ ծրագրին էին դիմել 145 կանայք Երեւանից ու մարզերից, որոնցից 95-ը վիրահատվել են, մյուսներն անցել հատուկ զննություն, ստացել խորհրդատվություն:**

**Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կարգադրությամբ արդեն մեկնարկել է մեկամսյակը, որի խորագիրն է՝ «Ձեզ համար, կանայք»: Այս տարի ակցիայի շրջանակներում երեւանաբնակ կանանց սպասարկելու են Երեւան քաղաքի ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհիմնարկներ եւ մի շարք բժշկական կենտրոններ: Բժշկական կենտրոններն են՝ Քանաքեռ-Զեյթուն, Սուրբ Աստվածամայր, Գրիգոր Նարեկացի եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը, Երեւանի պետական համալսարանի թիվ 1, թիվ 2 կլինիկական հիվանդանոցները եւ թիվ 2 բուժմիավորումը:**

**Հիվանդանոցային բուժօգնության կարիք ունեցող կանայք անցնում են անհրաժեշտ խորհրդատվություններ, լաբորատոր գործիքային նվազագույն հետազոտություններ, որից հետո ուղեգրվում են բժշկական կենտրոններ միայն պոլիկլինիկաների տված ուղեգրով:**

**Ակցիայի շրջանակում ընդգրկված չեն հետեւյալ ծառայությունները՝ սիրտ-անոթային, անոթային, պլաստիկ, ներվովիրաբուժական վիրահատությունները, ստոմատոլոգիական բուժօգնությունը, հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները: Հիվանդների ուղեգրման գործընթացի համակարգումը կատարվելու է քաղաքապետարանի առողջապահության վարչության կողմից հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող կազմակերպություններում առկա հնարավորությունների վերաբերյալ ունեցած տեղեկատվության հիման վրա:**

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության աշխատանքային խմբին հետեւյալ հեռախոսահամարներով՝ 51-41-83, 51-41-66 եւ 51-41-53:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Գեղամ Ղարիբջանյանը՝ դեսպան ԱՄԷ-ում



Ազգային ժողովի աշխատակազմի նախկին ղեկավար Գեղամ Ղարիբջանյանը դեսպան է նշանակվել Արաբական Միացյալ էմիրություններում: Հիշեցնենք, որ ավելի վաղ նա եղել է Հայաստանի փոխարտգործնախարար, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի դեսպան:

# «Բարբրին» ընդդեմ «Ջազզվեի»

Ինչպես տեղեկացանք Մեծ Բրիտանիայում գրանցված եւ գործող ապրանքային նշանների իրավատեր «Բարբրի լիմիթեդ» ընկերության՝ Հայաստանում շահերը պաշտպանող «Լեգելատա» ընկերությունից, «Բարբրի լիմիթեդը» իր ապրանքային նշանների պաշտպանության խնդիր է տեսնում Հայաստանի Հանրապետությունում:

Մասնավորապես, «Բարբրի լիմիթեդ» ընկերությանը պատկանող եւ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 07.02.2011-ին 16548 համարի տակ գրանցված պատկերային նշանը՝ առանց իրավատիրոջ թույլտվության, ըստ մեր ստացած հաղորդագրության, օգտագործվում է «Ջազզվե» ՍՊԸ-ին պատկանող սրճարաններում եւ սննդի օբյեկտներում:

Ըստ «Լեգելատայի» հաղորդագրության, «Բարբրի լիմիթեդ» ընկերությունը 2011-ի նոյեմբերի 25-ին նամակով դիմել է «Ջազզվե» ՍՊԸ-ին՝ խնդրելով դադարեցնել իրավատիրոջ ապրանքային նշանի օգտագործումը: Վերջինս էլ 2011-ի դեկտեմբերի 2-ին դիմել է էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն՝ «Բարբրի լիմիթեդին» պատկանող ապրանքային նշանը նույնությամբ այլ դասերի տակ գրանցելու համար: «Բարբրի լիմիթեդը» ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը արգելելու պահանջով դիմել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Ակնկալվում է «Ջազզվեի» համապատասխան արձագանքը:

**Ա. Ս.**

# «Հին Երեւանը»՝ 3 տարում

*Հանրային գերակա շահ՝ Արամի, Փ. Բուզանդի, Ե. Կողբացու փողոցներով պարփակված տարածքում*

**Հայաստանի կառավարությունը վաղը տեղի ունենալիք նիստին լիազորելու է Երեւանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության անունից «Ի ԷՄ ՍԻ» եւ «Գլենդել Հիլզ», «Սերգե-Ագոպիգ-Դեր-Սահագույան» ընկերությունների հետ կնքել Երեւան քաղաքի Արամի, Փ. Բուզանդի, Ե. Կողբացու փողոցներով պարփակված տարածքում սեփականության օտարման ընթացքում պետության եւ ձեռքբերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագրեր: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնելու նշված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից:**

**Որոշման մեկ այլ կետով ի գիտություն է ընդունվել, որ նշված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 3 տարվա ընթացքում Երեւանի Մ. Մաշտոցի պող. N 22/1 հասցեում գտնվող զբոսայգում Երեւանի ենթակայության «Կենտրոն-Կանաչապատում» ընկերության տեղադրած տաղավարները ենթակա են ապամոնտաժման՝ «Հին Երեւան» քաղաքաշինական ծրագրի իրագործումն ապահովելու համար:**

**Որոշման հիմնավորման մեջ նշված է, որ մինչ այդ էլ տվյալ տարածքում գերակա հանրային շահ է ճանաչված եղել, բայց որոշ սեփականատերերի չեն ուղարկվել օտարման պայմանագրերի նախագծեր, որոշ սեփականատերերի ուղարկվել են, սակայն չեն կնքվել պայմանագրերը, իսկ նախկին կառուցապատողներից մեկի՝ «Ավիա սերվիսի» կողմից ընդհանրապես օտարման գործընթաց չի իրականացվել:**

**Նախատեսվում է, որ «Հին Երեւան» նախագծով հնարավորություն կստեղծվի կորցված եւ քանդված պատմության ու մշակույթի 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի հուշարձանները տեղափոխելով վերստեղծել հին Երեւանի քաղաքաշինական գեղագիտական միջավայրը:**

**Ա. Ս.**

# Քաղաքական աճպարարության ժամանակը

*1-ին էջից*

**Բայց էդ դեպքում պետք է Սոս Պետրոսյան-կրտսերին (Սոս Պետրոսյանը, կարծում ենք, չի նեղանա) նույնպես ՀՀԿ կամ ԲՀԿ ցուցակ մտցնել, քանի որ ընտրողներին հիպնոսելու հարկ եւս կլինի ե՛ւ քարոզարշավի ընթացքում, ու հատկապես՝ ապագա խորհրդարանի քվեարկության կոճակները սեղմելու պահով: Ասում են՝ նաեւ ԱԺ դահլիճն այս ընթացքում մի լավ վերակառուցվելու է՝ այստեղ պոդիում եւ փոքրիկ բեմ են տեղադրելու նախագահության հետեւի ազատ տարածքն օգտագործելով, քանի որ քվեարկությունների ժամանակ ԱԺ դահլիճ կանչվող պատգամավորներին՝ երգիչ-մոդել-հաղորդավար պատգամավորների փոքրիկ շոուներ են խոստացվում, քվեարկության դիմաց որպես բարտեր:**

**Դե, իսկ քանի որ բռնցքամարտի, ծանրամարտի ու նույնիսկ շախմատի աշխարհի չեմպիոններն են լինելու իշխանական ցուցակներում, ԱԺ-ում լրջորեն մտածում են՝ պոդիումի ու բեմի հետ մի-մի սենյակ էլ սարքավորել ծանրամարտի, բռնցքամարտի ու շախմատի մարզաձեւերին անհրաժեշտ պարագաներով՝ պետք կգա, բոլորովին անպետք, լրիվ քյաշ փողով անցած պատգամավորներին գոնե այս մարզաձեւերի հիմնական սկզբունքներին կծանոթացնեն. դե հո օրենք չե՞ն գրելու էդ խեղճերը՝ բոլոր օրենքները գրված են, ու հայտնի չէ, թե ապագա խորհրդարանում 131 մարդ ինչո՞վ է զբաղվելու, բացի երգել-պարելուց, գոնե խորհրդարանի բուֆետում մի երկու «պրյոմ» ցույց կտան իրար-կզբաղվեն:**

**Առաջադրումների ու ցուցակների ինտրիգներն այդքանով կարող են չավարտվել: Այս անգամ հատկապես տարբեր տրամաչափի «աս» լրագրողներն ու «ախպոր տղա» կուսակցականները լայնորեն օգտվելու են «առաջադրում եւ ինքնաբացարկ՝ փողի դիմաց» հնարքից: Այն է՝ օլիգարխի դիմաց մեծամասնականով առաջադրվում ես, հետո վերջին պահին, նրան բավական «քցելով» (գները տատանվում են 25-ից 100 հազար դոլարի սահմաններում, տե՛ղն է նրանց, չեն ափսոսա)՝ համ օլիգարխին ես օժտում լուսապսակով՝ իբր այլընտրանք ունեցող թեկնածու է, համ էլ սուս-փուս օգտվում ես Օսամա Իբրահիմովիչի ասած փող աշխատելու 500 «ազնիվ» եղանակներից մեկից:**

**Ուշ երեկոյան էլ հայտնի դարձավ, որ 2-րդ ընտրատարածքում առաջադրվել է գործարար Ալբերտ Սարգսյանը, իսկ 19-րդում՝ գեներալ Սեյրան Սարոյանը: Հապա՞:**

**Էսօր-վաղը հայտնի կլինի ընտրացուցակային կլոունադայի ողջ համալիրը՝ կխոսենք:**

«Ազգի» թեթեւ հումորի բաժին

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# «Թշվառներ»

# Վթարային շենքերի բնակիչների համար հոգս է նաեւ երեխաներին դպրոց հասցնելը

Ընտրությունների օրը նրանք ուշադրության կենտրոնում են, սակայն մինչ այդ կամ դրանից հետո նույն թեկնածուներին նրանց հոգսերը լսելի չեն: Խոսքը Շենգավիթ վարչական շրջանի Արցախի 4-րդ նրբանցքի բնակիչների մասին է, որոնք ապրում են տարբեր աստիճանի վթարային 5 շենքերում: Միայն այս հասցեում շուրջ 500 ընտրող կա, եւ ընդհանուր հաշվով՝ շուրջ 1000 բնակիչ, որոնք մեծ մասամբ սոցիալապես անապահով, աղքատ ու ծայրահեղ աղքատ ընտանիքներից են:

Այստեղ շենքային պայմանները, մեղմ ասած, անմխիթար են, անձրեւի ու հալոցքի ջրերը կաթում են տանիքներից ներս, պատուհանների ապակիների փոխարեն ամրացված են ցելոֆաններ, մի խոսքով՝ շենքերով շրջելիս կարելի է տեսնել այնպիսի պայմաններ, ինչպիսիք երբեմն հնարավոր չէ նույնիսկ պատկերացնել:

Թշվառության այս միջավայրում մեծանում են նաեւ երեխաներ ու պատանիներ՝ 97 դպրոցահասակ եւ ավելի քան 30 նախադպրոցական տարիքի: Դժբախտաբար, նրանց կրթություն ստանալը եւս խնդրի է վերածվել, պատճառը տրանսպորտն է:

Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի ուղղությամբ միայն մեկ երթուղային տաքսի է աշխատում՝ 38 համարը, ինչը բավարար չէ առավոտյան երեխաներին դպրոց ու մանկապարտեզ, իսկ մյուսներին էլ աշխատանքի եւ ինստիտուտ տանելու համար: Երբեմն բնակիչները ստիպված են իրենց ուզած տեղը հասնել 2 երթուղային տաքսի փոխելով: Իսկ եթե դպրոցականը փոքր է, ասենք, առաջին կամ երկրորդ դասարանցի, ծնողը ստիպված ինքն է նրան դպրոց տանում ու վճարում 2 հոգու համար:

Արցախի 4-րդ նրբանցքին ամենամոտը Վ. Տերյանի անվան համար 60 դպրոցն է, ապա՝ համար 34-ն ու 6-ը, սակայն միայն Տերյանի անվան դպրոց կարելի է հասնել մի երթուղային տաքսիով, մյուսների դեպքում պետք է 2 երթուղային նստել, մինչդեռ Տերյանի անվան դպրոց հաճախում է երեխաներից միայն 40-ը:

Խնդիրն այստեղ ոչ միայն փոխադրամիջոցների սակավությունն է, այլեւ շատ ընտանիքներ չեն կարողանում վճարել երեխաների ու պատանիների ճանապարհածախսը: Եվ այդ պատճառով շատերը բացակայում են դասերից:

9-ամյա Սարգսին դասի ժամին հանդիպեցի հարեւանի տանը՝ երեխաների հետ խաղալիս, որոնք եւս դպրոց չէին գնացել: Սարգիսը սովորում է Վ. Տերյանի անվան դպրոցում, իսկ հարեւանի տանը, որտեղ տեսա նրան, 7 երեխա է ապրում, մեծը 15 տարեկան է, փոքրը՝ 2 ամսական: Նրանցից երեքը սովորում են գիշերօթիկ դպրոցում, չնայած այդ օրը բոլորն էլ տանն էին:

13-ամյա Սասունը դասի ժամին եւս տանն էր, չնայած Սասունի հայրը հավաստիացնում է՝ շաբաթական գոնե 2 անգամ տղային դպրոց ուղարկում է:

Շենքային պայմանների ու տրանսպորտի վիճակից բնակիչները բազմիցս բողոքել են տարբեր գերատեսչությունների, սակայն դրանից ոչինչ չի բարելավվել:

Բնակիչները մինչեւ հիմա սարսափով հիշում են, որ 7 տարի առաջ տուն գալուց 6 տարեկան մի երեխայի ճանապարհին շները հոշոտել են. տեղի անվտանգությունն էլ մի ուրիշ խնդիր է:

**Արմեն Ավետիսյանը** նշում է. «Նույնիսկ տղամարդիկ չեն համարձակվում երեկոյան ոտքով տուն գալ. այս տարածքում լիքը շներ կան: Իսկ 38 համարը ժամը 19-ից հետո հազվադեպ է հանդիպում»: Զրուցակիցս պատմում է՝ 38 համարի երթուղայինին հաճախ 1,5 ժամ սպասել է կանգառում, ապա ստիպված տուն գնացել տաքսիով:

Վթարային այս 5 շենքերի բնակիչները, հնարավորության սահմաններում, փորձել են «լուծում» գտնել: Օրինակ՝ ծնողները ամսական 700-ական դրամ գումար են հավաքում, ավտոբուս վարձում, որն օրական միայն մի անգամ երեխաներին տանում է դպրոց : Սակայն սա հարցի լուծում չէ, քանի որ ավտոբուսում տեղավորվում են միայն 40 երեխա, բացի դրանից՝ հետ գալուց ավտոբուսն այլեւս նրանց տրամադրության տակ չէ, իսկ 38 համարի երթուղային տաքսիների վարորդները, որոնք ճանաչում են երեխաներին, հաճախ նրանց համար չեն կանգնում: Իսկ կանգնելուց, երբ երեխան չի վճարում, վարորդների վերաբերմունքն ավելի քան անհանդուրժող է:



*Արցախի 4-րդ նրբանցքի «բնակարաններից» մեկում*

Արցախի 4-րդ նրբանցքին ամենամոտ դպրոցի հեռավորությունը 6,5 կմ է, մինչդեռ «Սուրբ Սանդուխտ» տիկնանց միության նախագահ **Արտեմիս Լեփեջյանը** տեղեկացնում է, որ «Կրթության մասին» օրենքում նշված է՝ 5 կմ-ից ավելի հեռու գտնվող հանրակրթական դպրոցների դեպքում պետությունը պետք է փոխհատուցի փոխադրամիջոցի ծախսերը:

«Սուրբ Սանդուխտ» միությունը ձեռնամուխ է եղել Արցախի 4-րդ նրբանցքում ապրող երեխաներին օգնելու հարցին: Տիկին Լեփեջյանը դիմել է տարբեր նախարարությունների, հիմնադրամների ու մարդկանց՝ ներկայացնելով տրանսպորտի խնդիրը, եւ թե ինչքան են դրանից տուժում առաջին հերթին երեխաները:

«Երեխաների համար առանձին ավտոբուս է հարկավոր, որը նրանց կտանի իրենց դպրոցներն ու մանկապարտեզները, ապա հետ կբերի», ավելացնում է Արտեմիս Լեփեջյանը:

Կազմակերպության դիմումներին առաջինն արձագանքել է պաշտպանության նախարարությունը եւ օգնելու պատրաստակամություն հայտնել: Երեւանի քաղաքապետարանից, Համաշխարհային եկեղեցիների կլոր սեղանից, հիմնադրամներից նույնպես խոստացել են օգնել:

«Դիմել ենք նաեւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանին, մինչեւ այս ամսվա վերջ նրանից պատասխան կստանանք», նշում է տիկին Լեփեջյանը:

Խոստումները շատ են, սակայն յուրաքանչյուրի տրամադրած գումարի չափը դեռեւս պարզ չէ: Տիկին Լեփեջյանը սպասում է նրանց գրավոր պատասխաններին, թեեւ համոզված է՝ բոլոր խոստացողները կպահեն իրենց խոստումը:

Տրամադրված գումարով երեխաների համար գնելու են ավտոբուս, որն ամբողջ օրը լինելու է նրանց տրամադրության տակ: Եվ նրանց ամեն օր տանելու է դպրոց, մանկապարտեզ եւ հետ բերելու տուն, ինչի համար ծնողներն այլեւս չեն վճարելու:

Նախընտրական այս շրջանում, հուսով ենք, խնդիրը կլուծվի, եւ դա նախընտրական մյուս խոստումների նման չի հնչի միայն օդի մեջ: Իսկ բնակիչների հանդեպ այսուհետեւ մեր պաշտոնյաներն ու թեկնածուները ուշադիր կլինեն ոչ միայն ընտրությունների օրերին, երբ նրանց հետեւից մեքենաներով գալիս են Արցախի 4-րդ նրբանցք եւ մեքենաներով տանում ընտրության, այլեւ նրանց հոգսերն ուշադրության կարժանանան գոնե նախընտրական շրջանում:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ

# Մոզրովի քարանձավի փլուզման փաստը դեռ ճշտվում է

Մարտի 13-ին, ժամը 12.35-ին Վայոց ձորի Գնիշիկի գյուղապետարանից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ահազանգ է ստացվել, որ Մոզրովի քարանձավում տեղի է ունեցել փլուզում: Քարանձավում, առաջին մուտքից 20 մ հեռավորության վրա փլուզվել է մոտ 50-70 խմ հողազանգված, մասնակի փակելով քարանձավի երկրորդ մուտքը: Զոհեր եւ վիրավորներ չկան: Այս տեղեկությունը տեղադրված է արտակարգ իրավիճակների կայքէջում: Սակայն «**Ազգին**» տեղեկացրին, որ Գնիշիկի գյուղապետը նման բան չի ասել եւ դեռ բերված փաստերը ճշտելու կարիք ունեն:

«**Ազգը**» փորձեց հեռախոսակապ հաստատել գյուղապետի կամ գյուղապետարանի որեւէ աշխատակցի հետ՝ ճշտելու ստացված լուրը: Մեր բոլոր ջանքերն ապարդյուն էին: Հեռախոսազանգերին պատասխանողներ չկային: «**Ազգի**» հեռախոսազանգերին չպատասխանեց նաեւ ՀՀ մշակույթի նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետի տեղակալ **Սամվել Մուսոյանը**: Միայն մեկ անգամ լսափողի այն կողմից կանացի մի ձայն համոզում էր, որ Մուսոյանը զբաղված է: Իսկ երբ տեղեկացավ, թե ինչ հարցով ենք նրան դիմում, պարզապես ասաց. «Թողեք ձեր հեռախոսի համարը, երբ գա, կասեմ, կամ ավելի ուշ զանգեք...», ու չպատասխանեց, թե ավելի ուշը, ըստ իրեն, որքան է: Ինչեւէ, մինչեւ ուշ երեկո այդպես էլ որեւէ մեկը խմբագրություն չզանգահարեց:

«**Ազգը**» տեղեկությունը փորձեց ճշտել ՀՀ մշակույթի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ **Գայանե Դուրգարյանից**: Վերջինս ասաց. «Ստացված ահազանգը ճշտելու համար մշակույթի նախարարության «Հուշարձանների պահպանության գործակալության համապատասխան ծառայության ներկայացուցիչները գործուղվել են Վայոց ձոր, տեղում ճշտելու եւ հստակեցնելու իրավիճակը»:

Սպասենք եւ տեսնենք, թե հանձնաժողովը ինչ եզրակացություն կներկայացնի:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Փոխկապակցված ագռավականչ

Առավոտյան զարթնում ես ու փոխանակ լսես թռչունների դայլայլը, լսում ես ագռավների կռկռոցը: Երեկոյան զբոսնում ես քաղաքում, փոխանակ հիանաս աստղազարդ երկնքով, տեսնում ես ագռավների հզոր կույտերը, հատկապես փոքր կենտրոնի ծառերի վրա: Ի՞նչ է՝ Երեւանը դարձել է ագռավների հայրենի՞ք:

Հայաստանում կան ագռավների երկու տեսակ՝ սեւ եւ մոխրագույն: Քննարկենք մոխրագույնի ապրելակերպը, քանի որ Երեւանն ուղղակի փթթում է այս տեսակի թռչուններով:

Մոխրագույն ագռավները հսկայական երամներով գիշերում են ծառաշատ զբոսայգիներում, շենքերի տանիքներում: Աղմկարար վարքով (հատկապես ձագերը բնից դուրս գալու օրերին), տհաճ կռռոցներով անհանգիստ մթնոլորտ են ստեղծում փողոցներում ու բակերում: Որպես ամենակեր (հատկապես մեծ քաղաքներում ու քաղաքամերձ աղբանոցներում կենցաղային թափոններով սնվողներ)՝ շրջակա միջավայրի աղտոտվածության ցուցիչ են: Մեծ վնաս կարող են պատճառել մանր (հատկապես ջրլող) թռչունների ձագերին ու ձվերին:



Սրանից հետեւություն՝ որքան աղտոտված է քաղաքը, որքան աղբը շատ է, այնքան շատ են նաեւ ագռավները: Առաջանում է եւս մեկ խնդիր՝ քաղաքից իսպառ վերանում են երգեցիկ թռչունները՝ սոխակները: Պատճառը կրկին նույնն է՝ աղտոտված, քիչ զբոսայգիներով քաղաք: Սակայն կարելի է հակադարձել: Ինչպե՞ս թե քիչ զբոսայգիներ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2007 թվականի գույքագրմամբ Երեւան քաղաքի կանաչ մակերեսը 6738.5 հա է, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը 832.3 հա է: Ընդ որում Երեւան քաղաքում կան բազմաթիվ զբոսայգիներ, որոնք, անկախ իրենց բարեկարգված եւ չբարեկարգված դրությունից, անցնում են 14-ը: Օրինակ՝ Կոմիտասի անվան զբոսայգի եւ պանթեոն, Թումանյանի անվան այգի, Վահան Զատիկյանի անվան այգի, Դավիթ Անհաղթի անվան զբոսայգի, Անգլիական այգի, Շահումյանի անվան պուրակ, Մանկական այգի, «Հաղթանակ» զբոսայգի, Սիրահարների այգի, Բուսաբանական այգի, Կենդանաբանական այգի, Մանկական երկաթուղի, Ընտանիքի այգի, Նանսենի անվան այգի եւ այլն: Հարց է առաջանում: Եթե Երեւանում կան այսքան այգիներ, թվացյալ կանաչ տարածքներ, ապա ինչո՞ւ է օդն այսքան աղտոտված, ագռավներն՝ այսքան շատ: Ու այս հարցից հետո էլ դեռ կա խնդիր, որ որոշ այգիների տեղում իրականացվում էին եւ ցանկանում են իրականացնել շինարարություն: Հիշենք Վիշապների այգին, որը փրկվեց ակտիվիստական խմբերի պայքարի շնորհիվ: Այժմ արդեն Մաշտոցի այգին, որը ցանկանում են բուտիկավորել: Ի՞նչ են մտածում այս ամենի մասին բնապահպանության նախարարությունը եւ Երեւանի քաղաքապետարանը: Կազմվել է 2012 թվականի Երեւանի քաղաքապետարանի կողմից նախատեսված կանաչապատման աշխատանքների համալիր ծրագիրը: Ըստ այդմ՝ մայրաքաղաքի զբոսայգիներում, պուրակներում եւ մյուս կանաչ տարածքներում նախատեսված են բարեկարգման եւ կանաչապատման լայնածավալ աշխատանքներ: Տարբեր լրատվական աղբյուրներում նշված է, որ այս տարի 3 անգամ կավելանան մայրաքաղաքի կանաչ տարածքները: Միգուցե իրականում Երեւանն ունի էկոլոգիական ոստիկանության կարիք, որ հետեւի քաղաքապետարանի եւ բնապահպանության նախարարության խոստումներին եւ այգիների մաքրությանը :

**ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳՍՅԱՆ**

## Բնապահպանական

# «Մեր կռիվը սոսկ ծառի, թփի կռիվ չէ»

## *Գյումրեցի երիտասարդների հետ հանդիպմանը պարզաբանեցին բնապահպան ակտիվիստները*

***Անցած շաբաթվա վերջին Երեւանից մեկնելով Գյումրի, տեղի մի խումբ ակտիվ երիտասարդների եւ լրագրողների հետ հանդիպեցին բնապահպանական շարժման ակտիվիստներ Արթուր Գրիգորյանը, Եղիա Ներսեսյանը եւ Մարիամ Սուխուդյանը: Այն բոլոր մտքերն ու հարցադրումները, որ նրանք ասուլիսի ընթացքում արտահայտեցին, ամփոփ ներկայացնելով մայրաքաղաքի Մաշտոցի պողոտայի կանաչ գոտու խնդիրը, հանրապետությունում ծավալվող բնապահպանական շարժումների իմաստն ու դրդապատճառները, կարծում ենք՝ հետաքրքրական են որպես մեր այսօրվա մտածող ու ակտիվ երիտասարդության գոնե մի մասի՝ երկրի շատ մոտ ապագայի տերերի մտածողության ու դիրքորոշման արտահայտություն:***

«Ես նախ մի քանի շեշտադրում անեմ, որպեսզի պարզ դառնա, որ մեր կռիվը ծառի, թփի կռիվ չէ,- ասաց Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության խմբի անդամ **Արթուր Գրիգորյանը**: - Շատերը մեզ դրանում մեղադրում են, թե դուք մարդուն թողել եք մի կողմ, ընկել եք ծառ ու թփի ետեւից»: Մինչդեռ վերջին հաշվով սա եւս մարդու համար է, որովհետեւ էկոլոգիական խնդիրները ոչ թե միայն ծառերի, բնության, շրջակա միջավայրի պահպանությունն են, այլ նախ եւ առաջ բնական պաշարների ռացիոնալ եւ արդարացի օգտագործումը, շահագործումը: Բնապահպանական խնդիրներն առաջանում են այդ պաշարները ոչ խելամիտ, երբեմն հանցավոր ձեւով շահագործելու պայմաններում:

Նկատի ունենալով մեր այսօրվա, իր բառով ասած, սպառողական հանքարդյունաբերությունը, բանախոսը միտք հայտնեց, թե ոչ ոք չի ասում՝ Քաջարանը չպետք է շահագործվի, ոչ ոք չի ասում, որ Սոթքը չպետք է շահագործվի: Բայց դրանք պետք է շահագործվեն այնպես, որ, նախ, դրանց եկամտի ոչ թե 20 տոկոսը, ըստ մեր օրենսդրության, մտնի պետական բյուջե, 80-ը գնա մասնավորի գրպանը (բազմապատիկ ստվերը դեռ չհաշված), այլ ընդհակառակը, 70-80 տոկոսը գնա պետական բյուջե, այսինքն մեզ, հանրությանը,- որովհետեւ դա հանրային սեփականություն է,- նոր մի 20-30-ը գնա մասնավորի գրպանը:

Բացի դրանից, պետք է ոչ թե այդ հանքահումքը այդպես էժան գնով վաճառել դուրս, այլ ստեղծել արտադրություն՝ դնել գործարաններ, տալ վերջնական արտադրանք: Եվ այս պարագայում դու համ աշխատատեղի խնդիր ես լուծում, համ քո բնական պաշարներն ես ռացիոնալ շահագործում:

Եվ որ մյուս կարեւոր հարցն է՝ խնդիր չի առաջանում հարձակվել միաժամանակ բոլոր հանքերի վրա, կարող ես մի քանիսը շահագործել եւ դրանով բավարարվել:

«Երբ մենք քիչ առաջ շրջում էինք Գյումրիում,- ասաց Գրիգորյանը,- ուղղակի ողբալի սոցիալական վիճակ տեսանք. այդ դոմիկները, չկա աշխատանք, չկան սոցիալական պայմաններ: Ի՞նչ կլիներ, եթե մի գործարան այստեղ կառուցվեր եւ օրինակ՝ այդ հանքահումքը դառնար ինչ-որ վերջնական արտադրանք, մարդիկ վարձատրվեին: Նորմալ աշխատավարձ տային, տնտեսությունը զարգանար...»:

Հայեցակարգային առումով, ինչպես ընդգծեց բնապահպան ակտիվիստը, կա հանրային սեփականության գիտակցման հարց: Եվ կա իշխանության կրող, որը, մեր սահմանադրության համաձայն, ժողովուրդն է: «Սուվերենը ես եմ, սուվերենը դու ես, նա է... Այն վարչապետ, քաղաքապետ, եսիմինչապետ՝ նրանք մեզ մոտ աշխատում են, վատ կաշխատեն՝ գործից կհանենք: Այսինքն մենք պետք է մեր մեջ մտցնենք այդ գիտակցությունը, որ մենք ենք տերը, մենք ենք իշխանությունը, իշխանության կրողը մենք ենք: Այդ հանրային սեփականությունը կլինի այգի, կլինի անտառ, կլինի գույք՝ կարեւոր չէ, այսօր խոսում ենք այգուց, վաղը կխոսենք ավելի ծանրակշիռ, ասենք՝ Թեղուտի անտառի հետ կապված հարցերից... Այստեղ էականը մարդկանց գիտակցության մեջ փոփոխություն մտցնելն է, մարդկանց հասկացնելը, որ «դու պահանջատեր ես, դու ես տերը, դու պետք է որոշում կայացնես»: Այ, սա է մեր առանցքային խնդիրը: Մեր ամենակարեւոր հարցը քաղաքացիական հասարակության ձեւավորումն է՝ գիտակից, պահանջատեր, չհարմարվող, չհամակերպվող: Սա է ամենակարեւորը, այս շարժման՝ բնապահպանական շարժման առանցքն ու կիզակետը»:

Երբ հայրենիքին դրսից թշնամու վտանգ է սպառնում, բոլորը զինվում են, գնում են կռիվ տալու: Հիմա նման տեսանելի վտանգ չկա, բայց ներսից... մեր երկիրը տանում են, մեր ընդերքը տանում են: Այսինքն 20 տարի հետո մենք կհայտնվենք անապատում, ինչո՞ւ չպիտի պայքարենք... Սա էլ ասում էր **Եղիա Ներսեսյանը**, հավելելով նաեւ, որ եթե այսօր չկա բողոք, համապատասխան արձագանք չի լինի եւ իրերի այդ վիճակն էլ չի փոխվի: Ուրեմն բողոքն է առաջին քայլը:

«Եթե կոնկրետ հիմա Մաշտոցի այգուց խոսենք,- իր միտքը շարունակեց նա,- նախ պիտի ասեմ, որ երբ մենք վերջին անգամ գնացինք Թեղուտ, մեզ ասացին՝ ինչո՞ւ Երեւանի համար չեք պայքարում: Մենք պիտի հասկանանք, որ իսկապես այս երկրի բոլոր խնդիրները երիտասարդների ուսերին են. եթե երիտասարդները չպայքարեն, ոչ մեկը մեզ չի սատարի...

Մենք չենք կարող հիմա միանգամից գլոբալ խնդիր լուծել, մենք պետք է քայլ առ քայլ առաջ գնանք, մենք պետք է կառուցենք այն Հայաստանը, որը, Մովսես Գորգիսյանի ասածով, վաղն է գալու: Աշխարհում ինչքան հայ կա՝ պիտի կառուցի այս Հայաստանը, որը մենք ենք ուզում: Որը մենք ուզում ենք ժառանգություն թողնել հաջորդ սերնդին: Խոսքերով չէ, գործով... Այն մենք կարող ենք կառուցել, ես համոզված եմ»: Կարող ենք՝ պահանջատեր սերունդ լինելով ու, իր արտահայտությամբ, Սասնո ծռերի պես իրար մեջք մեջքի կանգնելով:

Ներսեսյանի դիտարկմամբ, արդեն շատերն են հասկանում, որ այսօր Մաշտոցի այգու խնդիրը միայն այգու խնդիր չէ, այլ նաեւ հանրային գիտակցության: Այն բանի, երբ մարդ տեր է կանգնում իր երկրին: Մարդ, որը չի ձգտում ո՛չ իշխանության, ո՛չ փողի, այլ ուզում է ինքն իր երկրում նորմալ ապրել: Եվ ասում է՝ սա իմ իրավունքն է, մի՛ տրորեք իմ իրավունքը:

**Մարիամ Սուխուդյանը**, խոսելով Մաշտոցի պուրակի համար արդեն մոտ մեկ ամիս մղվող պայքարի ու դրան իշխանությունների անբավարար արձագանքի մասին, տեղեկացրեց իրավիճակը չփոխվելու դեպքում բնապահպան ակտիվիստների այս շաբաթ նախատեսած առավել արմատական քայլերի մասին:

Հանդիպմանը բնապահպանական հիմնախնդիրների հետ կապված մի շարք հետաքրքրական հարցադրումներով հանդես եկավ Գյումրու «Բիոսոֆիա» հասարակական կազմակերպության նախագահի **Գեւորգ Պետրոսյանը**: Նրա հարցադրումներին կանդրադառնանք առանձին:

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

# Հարցադրումներ՝ կապված Մաշտոցի այգու հետ

Վերջին օրերին Երեւանի ակտիվիստական խմբերը, քաղաքացիները, բնապահպանները համախմբվել են փրկելու Մաշտոցի պողոտա-Եզնիկ Կողբացի հատվածում գտնվող այգին:

Քաղաքապետարանի որոշմամբ Երեւանի Աբովյան փողոցում՝ առավելապես մայթերի ու կանաչ գոտու վրա սեփականության իրավունքով պատկանող հիմնական շինությունները Երեւանի քաղաքապետարանի գործադրած ջանքերի շնորհիվ ապամոնտաժվել են հունվարի 18-ից: Շինությունների սեփականատերերին որպես փոխհատուցում առաջարկվել են այլ տարածքներ, որոնց թվում նաեւ Մաշտոցի պողոտա-Եզնիկ Կողբացի հատվածի զբոսայգում հարակից տարածքը: Վերջինը կառուցապատման իրավունքով գրանցված է Երեւանի ենթակայության «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի անվամբ: Մտավորականների, հասարակական գործիչների, նույնիսկ քաղաքացիների կարծիքով սա մեծ քայլ էր նորանշանակ քաղաքապետի կողմից մաքրել Աբովյան փողոցը, որը դեռ խորհրդային տարիներին եղել է երեւանցիների զբոսանքի ամենասիրելի վայրերից մեկը, որտեղ նրանք այցելում էին տեսնելու մեծն գրողներին, ինչպիսիք են Պարույր Սեւակը, Կոստան Զարյանը, Հովհաննես Շիրազը եւ ուրիշներ: Ընդ որում մամուլը մեծ ոգեւորությամբ լուսաբանեց կրպակների ապամոնտաժման հետ կապված աշխատանքները: Սակայն օրեր անց ակտիվիստներն ահազանգեցին, որ այդ կրպակները տեղափոխվել են հանրային կանաչ գոտու տարածք: Հարց է առաջանում՝ արդյո՞ք Աբովյան փողոցը բարեկարգելու համար անհրաժեշտ էր ի բարօրություն մասնավոր շահի այգին նվիրել «բուտիկ»-խանութներին, այն էլ այն այգին, որի անմիջապես հարեւանությամբ գտնվում է Մարգարյան ծննդատունը: Կա նաեւ խնդրի մեկ այլ կողմ, որոնք բարձրաձայնում են իրենք քաղաքացիները. ինչո՞ւ մինչեւ կրպակների վերակառուցումը այգում ակտիվիստները չէին բողոքում այգին բարեկարգելու համար, արդյո՞ք այժմյան քաղաքացիական շարժումները չեն օգտագործվում նախընտրական քարոզարշավում, չէ՞ որ այգու պաշտպանությանն ուղղված նստացույցին, ակցիաներին մասնակցում էին նաեւ քաղաքական գործիչներ, ԱԺ պատգամավորներ:




Նախ քննարկելով հարցերը ժամանակագրական առումով՝ պարզաբանենք, որ այգու պաշտպանության հարցն արդեն բավականին ժամանակ մտահոգում է ակտիվիստական խմբերին, ի դեմս «Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնությանը, որը բազում ակցիաներ է իրականացրել այգու պաշտպանության համար: Հետազոտելով արխիվային նյութերը՝ կարող ենք ասել, որ դեռեւս 2011 թվականի ամռանը այգում տոնվել է երեխաների պաշտպանության տոնը, դրանով իսկ քաղաքացիների ուշադրությունը սեւեռելով այգու կողմը, այն քիչ կանաչ գոտիներից մեկը, որ այսօր դեռեւս առկա է Երեւանում: Չնայած կարելի է պնդել, որ այգին, հատկապես դեպի Սարյան փողոցն ընկած հատվածը, գտնվում է բավականին անխնամ վիճակում:

Անդրադառնանք քաղաքացիական շարժումներին: Առաջանում է խնդիր, որը մտահոգում է քաղաքացիներին եւ վերջիններս վերլուծելով խնդրին առնչվող բոլոր կողմերը՝ փաստերով բողոքարկում են այն: Ի՞նչ տեղի ունեցավ այգու խնդրի ժամանակ: «Մենք ենք այս քաղաքի տերը», «Մեր քաղաքը» նախաձեռնությունները բարձրացրին այգու բուտիկավորման խնդիրը: Խնդրով լի կծիկը սկսեց մեծանալ եւ այգու պաշտպանությանը միացան Երեւանի թերեւս բոլոր ակտիվիստական խմբերն ու ակտիվիստները, ի դեմս «Թռչկան» քաղաքացիական նախաձեռնության անդամների, որոնք հաջողեցին՝ փրկելով «Թռչկան» ջրվեժը: Նույն թիմը զբաղվում է նաեւ Թեղուտի անտառի պաշտպանության գործով: Կարելի է ասել, որ ակտիվիստական շարժումները բուռն զարգացում են ապրում այսօր Երեւանում: Գոյանում է ակտիվիստական լուրջ թիմ, որը մտահոգված է երկրի խնդիրներով: Իր մեջ պարունակում է տարբեր մասնագիտություն ունեցող մարդկանց, ովքեր հարցը վերլուծում են իրավաբանական, բնապահպանական եւ այլ բոլոր ճանապարհներով եւ լուրջ փաստեր առաջարկում, օրինակ՝ Մաշտոցի այգու պաշտպանության հարցում Երեւանի քաղաքապետարանին: Ընդ որում քաղաքապետարանը ակտիվիստների պահանջներից ու հզոր ակցիաներից հետո, արդեն շինարարության եւ ակտիվիստների նստացույցի բռնի կերպով կանխելուց հետո միայն շինարարության հրապարակում փակցրեց շինարարությունն իրականացնելու ցուցապաստառը եւ ներկայացրեց, կրկին նստացույցերից հետո, Երեւանի գլխավոր հատակագիծն, ըստ որի բուտիկներն ունենալու են մինչ «Հին Երեւան» ծրագրի իրականացման ավարտի ժամկետով կյանք, քանի որ նախագծից ելնելով՝ այդ հատվածը պետք է արտացոլի հին Երեւանը: Այստեղ կրկին հարց է առաջանում, արդեն քաղաքաշինական եւ ճարտարապետական: Եթե բուտիկները ժամանակավոր են, ինչու են բետոնապատում տարածքը եւ արդյո՞ք ապամոնտաժելով հին շենքերը, կստացվի հին Երեւանի մի փողոց, որը կնմանվի այժմյան մեռելային Հյուսիսային պողոտային, միայն այն նմանությամբ, որ նույն կոլորիտային շունչը չի զգացվի իրար քիչ թե շատ հարող փողոցներում:

Ինչ վերաբերում է ԱԺ պատգամավորների ներկայությանը այգու պաշտպանության գործում: Կարծում եմ՝ գովելի է այդ փաստը, որ նման խնդիրներով պետք է բարձրաձայնեն ոչ միայն քաղաքացիները, այլեւ քաղաքական գործիչները, իհարկե առանց քաղաքականացնելու խնդիրը: Նման ակցիաները բնականաբար «PR» արշավ կազմակերպելու լավագույն միջոցներից է, սակայն ավելի գերադասելի է նման տարբերակը, քան Ազգային ժողովում բացակա պատգամավորի փոխարեն կոճակ սեղմելը:

Համփոփում կարող ենք նշել, որ Մաշտոցի այգու խնդրի առնչությամբ առկա է նման երեւույթ: Նորանշանակ քաղաքապետը կատարեց լուրջ քայլ՝ մաքրելով Աբովյան փողոցը բուտիկներից, սակայն դրանց համար նախատեսված տարածք՝ հանրային կանաչ գոտին, այժմ տուժում է նման որոշումից: Չնայած որ բանակցությունների արդյունքում ապամոնտաժվեցին երկու կրպակներ, որոնք անմիջապես հարում էին ծառերին, այնուամենայնիվ խնդիրը դեռեւս լուծված չէ: Փետրվարի 21-ին Երեւանի քաղաքապետն իր հայտարարությամբ հստակորեն պարզաբանեց, որ նշված գործընթացի արդյունքում ամբողջությամբ բարեկարգվելու եւ կանաչապատվելու են Աբովյան փողոցի ապամոնտաժված շինությունների զբաղեցրած հատվածները: Իսկ զբոսայգու բուն տարածքում իրականացվելու են հետեւյալ աշխատանքները.

- հենապատերի եւ եզրաքարերի վերանորոգում եւ վերականգնում,
- կանաչ գոտու վերականգնում եւ ավելացում, ծաղկապատում,
- ոռոգման ցանցի վերականգնում,
- սալիկների վերականգնում,
- նստարանների եւ աղբամանների տեղադրում,
- արտաքին լուսավորության ապահովում:

Չնայած այս ամենին՝ ակտիվիստներն ակցիաներ են կազմակերպում այգու տարածքում, մաքրում սառույցը, բարեկարգում այգին՝ քաղաքացիների ուշադրությունը սեւեռելով այգու կողմը:

**ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

# «Հայ հրոսակախմբերը 518 հազար մարդու են սպանել»

## *Հայտարարում է Հալաչօղլուն՝ ընդգծելով, որ մինչեւ 1915-ի մայիսը սպանել էին նաեւ 128 հազար թուրքի*

Փետրվարի 26-ին Ստամբուլի «Թաքվիմ» հրատարակում վարչապետ Էրդողանի կառավարությունը կազմակերպել էր Խոջալուի «կոտորածի» ոգեկոչման հանրահավաք, որը վերածվեց հայատյացության ցույցի: Հանրահավաքի մասնակից թուրք-ադրբեջանական հրոսակների շուրջ 100-հազարանոց խառնամբոխը ոչ միայն հայերին վիրավորող, հանգուցյալ Հրանտ Դինքի հիշատակն անարգող ցուցապաստառներն էր բարձրացրել, այլեւ բացականչություններով փառաբանել էր մարդասպան Օգյուն Սամասթին եւ կրել սպիտակ բերետ, ինչպիսին Դինքին սպանելու պահին իր գլխին էր դրել Սամասթը:

Այլ կերպ, հանրահավաքում հրոսակաբարո թուրք խառնամբոխը շարունակել է հիանալ վարձու մարդասպանով: Հաշվի առնելով, որ ադրբեջանցի հրոսակն էլ հային սպանելու համար Ռամիլ Սաֆարով կոչված տականքին ազգային հերոս է հռչակել, ապա կարելի է ասել, որ հրոսակաբարո թուրք խառնամբոխն ու ադրբեջանական ոհմակը հիրավի մեկ ազգ են, եւ սրանց միավորում է մարդ սպանելու անասնական բնազդը:

Խնդիրը, սակայն, թուրքական խառնամբոխի եւ ադրբեջանական ոհմակի հայատյացությունը չէ, այլ հանրահավաքում Խոջալուի այսպես կոչված կոտորածի ոգեկոչման պատրվակով հայ ժողովրդին վիրավորելու, թուրքական պետական կառույցների մասնակցությամբ սպանված Հրանտ Դինքի հիշատակը անարգելու ստորության օրինականացումը, որն արեց Թուրքիայի ներքին գործերի նախարար Շահինը՝ ակտիվորեն մասնակցելով «ոգեկոչման» հանրահավաքին:

Ստամբուլի այս հանրահավաքն իրականում Ֆրանսիայի Սենատի ընդունած ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի արձագանքն էր, թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը կասեցնելու անզորության խոստովանություն, ինչպես նաեւ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստություն, այլապես Էրդողանի կառավարությունը հանձն չէր առնի դրա կազմակերպումը:

Այս ամենի առումով չափազանց հասկանալի է Քյոթահիայի «Դումլուփընար» համալսարանի մարտի 11-ին «Թուրք-հայկական հարաբերություններ» թեմայով կազմակերպված միջոցառումը, որին իբրեւ բանախոս մասնակցել է Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ եւ Մեջլիսի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր, պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն:

Հալաչօղլուի դասախոսության մասին, ինչպես նշում է «Սոնդաքիքա» կայքէջը, հաղորդագրությամբ տեղեկացրել է համալսարանի ռեկտորատը: Համաձայն դրա, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Հալաչօղլուն ասել է. «Հայ հրոսակախմբերը 518 հազար մարդու են սպանել: 1914-ի մայիսից մինչեւ 1915-ի մայիսը, այսինքն մինչեւ տեղահանություն նրանք սպանել էին եւս 128 հազար թուրք մահմեդականի: Այս 128 հազարը խաղաղ բնակիչներ եւ գյուղացիներ էին: Այդ նույն կոտորածը իրականացրին նաեւ Խոջալուում: Սարգսյանը որպես պատերազմի հանցագործ անհապաղ պետք է կանգնի միջազգային դատարանի առջեւ: Նրանք, ովքեր «ցեղասպանություն չի եղել» ասելու համար դատապարտում են թուրքերին, չգիտես ինչու անտեսում են իրենց աչքի առջեւ տեղի ունեցած եւ բազմիցս տեսագրված իրողությունը: Միայն Վանում սպանվել է 80 հազար մարդ: Հայերը նրանց միջից վերցրել էին 50 երիտասարդ կանանց, որ տանեն Աղթամար կղզի, սակայն այս կանայք իրենց պատիվը փրկելու համար խեղդամահ եղան Վանա լճում»:

Ակամա հարց է ծագում. ի՞նչ առնչություն ունեն Հալաչօղլուի ասածները «թուրք-հայկական հարաբերություններ» թեմայով կազմակերպված դասախոսության հետ, թե Հալաչօղլուն ակամա խոստովանում է, որ այդ հարաբերությունների ընթացքը Թուրքիայում՝ օսմանյան թե քեմալական, մշտապես կանխորոշել է բռնության նկատմամբ թուրք մարդասպանի հակվածությունն ու հայերին բնաջնջելու նրա մոլուցքը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԴԱՄԱՍԿՈՍ

# Սիրիան «Ալ Ջազիրային» մեղադրեց ահաբեկչության մեջ

## *Ընդդիմությունն օտարներին ներխուժման կոչ է անում*



**Սիրիայի կառավարությունը «Ալ Ջազիրա» եւ «Ալ Արաբիա» հեռուստաալիքներին մեղադրել է երկրի տարածքում ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Համապատասխան հայտարարությամբ հանդես է եկել Սիրիայի տեղեկատվության նախարար Ադնան Մահմուդը: Այդ մասին հաղորդում է SANA պետական լրատվական գործակալությունը:**

**Մահմուդի խոսքերով, քաթարյան «Ալ Ջազիրան» եւ ԱՄԷ-ում գործող «Ալ Արաբիան» որպես թղթակիցների Սիրիա են գործուղում ահաբեկիչների, որոնք սպանում են խաղաղ բնակիչներին: Այդ հանցագործությունների տեսագրությունները ցուցադրվում են հեռուստաեթերում, իսկ դրանց պատասխանատվությունը բարդվում է Սիրիայի կառավարության վրա:**

**Բացի դրանից, Մահմուդը Սիրիայի արյունահեղության մեջ մեղադրել է Սաուդյան Արաբիայի եւ Քաթարի իշխանություններին, նրանց անվանելով «ահաբեկիչների կամակատարներ» եւ հայտարարելով, որ նրանք ֆինանսավորում ու զինում են Ասադի վարչակարգի հակառակորդներին:**

**Վերջիններս արաբական պետություններին եւ Արեւմուտքին հորդորում են Սիրիայում իրականացնել ռազմական միջամտություն, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Ընդդիմադիր ուժերի Սիրիական ազգային խորհրդի ներկայացուցիչները Ստամբուլում կազմակերպած մամլո ասուլիսում հայտարարել են, որ ռազմական ներխուժումը անհրաժեշտ է Սիրիայում «հումանիտար միջանցքներ» ստեղծելու համար: Բացի դրանից, ընդդիմության ներկայացուցիչները պահանջել են երկրի օդային տարածքում ստեղծել թռիչքազերծ գոտի՝ խաղաղ բնակչության դեմ ուղղված բռնություններին վերջ դնելու նպատակով:**

**Խորհրդի ներկայացուցիչները նաեւ հայտարարել են, որ մի շարք երկրներ արդեն իսկ զինում են ապստամբներին, բայց հրաժարվել են նշել այդ երկրների անունները:**

**Սիրիական ազգային խորհրդի կենտրոնական գրասենյակը գտնվում է Թուրքիայում: Արտերկրում Բաշար Ասադի վարչակարգի դեմ հանդես եկող խորհուրդը հիմնվել է 2011-ի օգոստոսին եւ սիրիական ընդդիմության խոշորագույն ու առավել լավ կազմակերպված միավորումն է:**

# Ասորական ամսաթերթ Թուրքիայում

Ինչպես հայտնի է, թուրք հրոսակը 1915-ին հայերի հետ ցեղասպանության է ենթարկել նաեւ քրիստոնյա ասորիներին, բնաջնջելով ավելի քան 1 մլն ասորի: Ասորական տարբեր կազմակերպություններ ձգտում են Շվեդիայի գլխավորությամբ եվրոպական երկրներում ասորական ցեղասպանության ճանաչմանը:

Հայտնի են նաեւ Թուրքիայի ազգային փոքրամասնության կարգավիճակ ստանալու ասորական համայնքի ձեռնարկումները: Դրանք իրողություն կդառնան, թե ոչ, ցույց կտա ժամանակը: Բայց որ ասորիները, ըստ երեւույթին Ստամբուլում, մեկամսյա «Սաբրո» հանդեսն են հրատարակում թուրքերեն եւ ասորերեն տարբերակներով, արդեն փաստ է: Ի դեպ, այդ մասին տեղեկացրել ենք Ստամբուլի «Հայթերթ» կայքէջի միջոցով, իսկ «սաբրո» բառը «հույս» է նշանակում:

Հ. Չ.




# Բրիտանացի քրիստոնյաներին արգելում են խաչ կրել աշխատավայրում

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շուտով քննության կառնի հրապարակայնորեն խաչ կրելն արգելելու Մեծ Բրիտանիայի իշխանությունների որոշումը: Դատաքննության առիթը մի քանի բրիտանուհիների բողոքներն են, որոնց աշխատանքից ազատել են աշխատավայրում քրիստոնեության խորհրդանիշը չհանելու համար: Հավատացյալներից շատերը դա համարում են խտրականություն: Արգելքի կողմնակիցներն իրենց հերթին պնդում են, թե քրիստոնեությունը չի ենթադրում սեփական հավատքի ցուցադրություն խորհրդանիշների միջոցով:**

**Հայցվորներից մեկը՝ հիվանդանոցի նախկին աշխատակցուհի Շիրլի Չապլինը BBC-ին տված հարցազրույցում ասել է, որ Մեծ Բրիտանիայում ներկայումս «քրիստոնյաները ստիպված են պայքարել իրենց ձայնը լսելի դարձնելու համար»:**

**Քրիստոնեական իրավաբանական կենտրոնի տնօրեն Անդրեա Ուիլյամսը նշում է, որ Չապլինի հիվանդանոցի տնօրենությունը «վիճել է նրա հետ, բայց ընդսմին հովանավորել է ուրիշ կրոնական խմբերի, օրինակ՝ մահմեդականները թույլատրել են աշխատավայրում կրել հիջաբ կամ թեւերը ծածկել մինչեւ դաստակները՝ ըստ իրենց համոզմունքների»:**



**Մեծ Բրիտանիայում, որտեղ տարբեր կրոնական համոզմունքների նկատմամբ հանդուրժողականությունն արդեն ինքնին դարձել է պաշտամունք, նման դատաքննությունն անսպասելի է, ինչպես նաեւ անցանկալի, քանի որ հարցը լսվելու է միջազգային դատարանում:**

# Ֆրանսիան սպառնում է դուրս գալ Շենգենյան գոտուց

## *«Ընդհատակյա ներգաղթը ոչնչացնում է Եվրոպան»*

**Նախընտրական արշավի շրջանակներում Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին սպառնացել է իր երկիրը դուրս բերել ազատ շրջագայության Շենգենյան գոտուց, եթե դրա մեջ մտնող բոլոր երկրները վերջ չդնեն ընդհատակյա ներգաղթին:**

**Եվրոպական 25 երկրի ստորագրած Շենգենյան համաձայնագիրը Եվրամիության ամենակարեւոր ձեռքբերումն է միասնական արժույթի ստեղծումից հետո: Սակայն այսպես կոչված «արաբական գարնան» ալիքի վրա Իտալիայում անօրինական ներգաղթյալների թվի կտրուկ աճը սպառնում է ԵՄ-ի մյուս երկրների անվտանգությանն ու կայունությանը:**

**Սարկոզին այդ վտանգի մասին խոսել է Փարիզում կազմակերպված նախընտրական հանրահավաքում: Նախագահը նաեւ հայտարարել է, որ Եվրոպան ի վիճակի չէ ընդունելու աննախադեպ թվով ներգաղթյալների, որոնք խարխլում են ԵՄ երկրների սոցիալական կառույցը: Աղետը կանխելու միակ միջոցը, նրա կարծիքով, ներգաղթի քաղաքականության բարեփոխումն է:**

**Նախագահի խոսքերով, եթե առաջիկա 12 ամիսներին տվյալ բարեփոխումը չմշակվի ու չիրականացվի, ապա Ֆրանսիան դուրս կգա Շենգենյան գոտուց եւ կփակի իր սահմանները մինչեւ գործընթացի ավարտը:**

**Սարկոզին ավելացրել է, որ նախագահի վերընտրվելու դեպքում իր արտաքին քաղաքականության գերակայությունը կդառնա Մերձավոր Արեւելքի խնդիրների լուծումը:**

## ՄԱԿ ՊԳԿ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Միավորված ազգերի կազմակերպության **Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը** «Հայաստանի Հանրապետությունում անտառապատում և անտառվերականգնում» տեխնիկական աջակցության ծրագրի իրականացման շրջանակներում հրավիրում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպություններին մասնակցել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին պատկանող ջերմատնային կոմպլեքսի գազաֆիկացման մրցույթին: Մանրամասներին կարող եք ծանոթանալ **http://www.un.am/en/Procurement** կայք-էջում՝ *Gas Pipeline Installation at the Green House of Hayantar SNCO of Hrazdan* Enterprise Branch վերտառությամբ հայտարարության ներքո:

ՌԱԿ «ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ» ԱԿՈՒՄԲ

# Քաղաքականից դեպի հոգեւոր մթնոլորտ



Արմեն Միկոյանը շուրջ 25 մասնակիցներից մեկն է, որի աշխատանքները մինչեւ մարտի 19 ցուցադրվելու են Թեքեյան կենտրոնում: Նրա 2 նկարն էլ մարդկային հոգեվիճակի պատկերում են գույնի ու գծի միջոցով:

Արմենը Վանաձորից է, սովորում է Գեղարվեստի ակադեմիայում, իր ծրագրերից ու նկարներից շատ խոսել չի սիրում, իսկ նկարները գնահատում է հետեւյալ կերպ. «Եթե նայողը նկարը չի զգում, ուրեմն նկարը չի ստացվել»:

Արմենի նկարների կողքին ցուցադրվում են նաեւ արդեն պրոֆեսիոնալ նկարիչների գործերը՝ ի դեմս Ղարիբյան Սամվելի, որը Նկարիչների միության անդամ է, եւ նրա գործերը ցուցադրվել են տարբեր երկրներում:

Ցուցահանդեսի մասնակիցներն ընտրվել են անկախ տարիքից, սեռից ու ներկայացրած աշխատանքների թեմատիկայից: Նախաձեռնությունն Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) «Զապել Եսայան» կանանց ակումբինն է, իսկ մասնակցում են նաեւ քաղաքական մթնոլորտից տանել դեպի հոգեւորը, որից մեր հասարակությունն իսկապես հեռացել է», ավելացրեց **Գայանե Մուրադյանը**:

Եվ ինչպես նշեց Արմենական-ՌԱԿ ատենապետ **Հակոբ Ավետիքյանը**. «Թվում է՝ կուսակցականները պետք է զբաղվեն միայն քաղաքական ու գաղափարախոսական հարցերով, սակայն մեր կուսակցությունը նաեւ ունի պարտականություն քաջալերելու արվեստի գործիչներին ու ստեղծագործողներին»:

Երիտասարդ ստեղծագործող Նազելի Սարգսյանն էլ ներկայացրել էր գոբելեններ, նրա ընտրած թեմատիկան տարվա եղանակներն են: Թեեւ նրա գոբելեններն առաջին անգամ չեն ցուցադրվում, սակայն Նազելին կարեւորում է եւս մեկ անգամ ցուցադրվելու հնարավորությունը:

Ներկայացված աշխատանքները 40-ն են: Իսկ դրանց արժեվորումը կտա նաեւ գնորդը: Եթե նկարը գնվում է, անկախ իր գնից, դա արդեն հաջողություն է:

Ընդհանրապես, կուսակցության անդամ ու համակիր ստեղծագործողները մարզերում բավականին ակտիվ են, հատկապես Գյումրի ու Վանաձոր քաղաքներում, մարզերում ցուցահանդեսներ եւս կազմակերպվում են:



ինչպես կուսակցական, այնպես էլ համակիր ստեղծագործողները:

«Զապել Եսայան» ակումբի ատենապետ եւ Արմենական-ՌԱԿ վարչության անդամ Գայանե Մուրադյանը նշում է՝ ցուցահանդեսի համար ի սկզբանե ընտրվեց այնպիսի խորագիր՝ «Կուսակցական ստեղծագործողներին ասպարեզ», որպեսզի կապարներ չստեղծեինք ստեղծագործողների համար: Խորագրի ներքո հավաքվել են մասնակիցներ Երեւանից ու Հայաստանի տարբեր մարզերից, իսկ ցուցահանդես-վաճառքը, որը բացվեց մարտի 9-ին, նվիրված էր կանանց միջազգային օրվան:

«Այս միջոցառումով փորձել ենք փոքր-ինչ լիցքաթափել քաղաքական շիկացած մթնոլորտը, եւ նախընտրական շրջանում հասարակության…

«Բայց կուզենայինք նրանց գործերը ներկայացնել նաեւ Երեւանի հանրությանը, եւ ինչու ոչ՝ նաեւ ասպարեզ բացել նրանց համար», հավելում է Հակոբ Ավետիքյանը:

Ցուցահանդեսի բոլոր մասնակիցները կուսակցությունից ստացան շնորհակալագրեր:

Կուսակցության հետ ակտիվ համագործակցելու համար շնորհակալագիր ստացավ եւ Վանաձորի Հայորդյաց տան տնօրեն Թամարա Հարությունյանը, որի սաները իրենց հիանալի ելույթներով ճոխացնում են Լոռու մարզում իրականացվող հրապարակային միջոցառումները:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Մեծ Բրիտանիայի մշակութային մուտքը հեռավոր մարզատարածաշրջան

Սովորաբար, երբ խոսք է բացվում Տավուշի մարզի նախկին Շամշադինի շրջանի մասին, հաճախ է հիշատակվում «լեռների մեջ ծվարած երկրամաս» արտահայտությունը: Եվ սա սոսկ բանաստեղծական պատկեր չէ. տարածաշրջանը հիրավի պարփակված է լեռների մեջ՝ հեռու մայրաքաղաքից, կտրված գլխավոր տրանսպորտային մայրուղիներից, երկրի կյանքում տեղի ունեցող բազմաբնույթ շատ իրադարձություններից:



Ֆոտոկոլաժ՝ Մանե Ալեքսանյանի

Ահա եւ կարելի է պատկերացնել տեղացիների խանդավառությունը, երբ իմացան, որ Հայաստանում անցկացվող բրիտանական ֆիլմերի փառատոնի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Վանաձորի հետ մեկտեղ ընդգրկված է նաեւ Բերդ քաղաքը: Կենսահոգսերի մեջ խրված, միապաղաղ կյանքից հոգնած բերդցիների համար սա մեծ ու հաճելի անակնկալ էր, հուսադրող, որ իրենք դեռ չեն մոռացվել...

Բերդ քաղաքի նորացված ու առանց չափազանցության արդիականացված «Արեւաբերդ» կինոթատրոնում տեղի ունեցավ փառատոնի հանդիսավոր բացումը: Ծրագրված էր, որ միջոցառմանը կմասնակցի Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Քեթրին Լիչը: Ցավոք հարգելի պատճառներով մեծարգո տիկինը չկարողացավ ներկա գտնվել: Սակայն տեղացիները շատ կուզեին, որ նա Բերդ այցելեր ամռանը՝ վայելելով աշխարհի շքեղագույն բնությունը: Իսկ փառատոնի մեկնարկը տեղի արվեստակարոտ հասարակայնության ներկայացուցիչների առկայությամբ հայտարարեց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի սեւաչ ու գեղեցկատես տնօրեն **Արեւիկ Սարիբեկյանը**: Նա պատմեց, որ ներկա կինոփառատոնը հոբելյանական է, քանզի Բրիտանական խորհուրդը այս տարի նշում է իր տասնամյա հոբելյանը Հայաստանում: Սարիբեկյանը նշեց, որ վերջին շրջանում խնդիր է դրված բրիտանական մշակույթը, տվյալ դեպքում կոնկրետ կինոարվեստը լայնորեն ներկայացնել նաեւ հեռավոր մարզերում: Այնպես որ բերդցիները կարող են ակնկալել նաեւ այդ կարգի այլ միջոցառումներ:

Փառատոնի առաջին օրը բերդցիները ամենայն արժանապատվությամբ դիտեցին «Բաբելոնյան հրդեհ» անգլիհունչ, բայց հայերեն ենթագրերով ժապավենը: Կիսաջորդեն «Ձնջելով Դեյվիդի հետքերը», «Չսիրվածը» եւ «Օլիվեր» ֆիլմերը, որոնք պատմում են բրիտանական կյանքի տարբեր կողմերի մասին:

- Երբ մոտ երկու տարի առաջ մեր համերկրացի կինոինժեներ-բիզնեսմեն Վիկտոր Հայրապետյանը իր միջոցներով հիմնանորոգեց ու բառի բուն իմաստով կենդանացրեց կատարյալ մոռացության մատնված «Արեւաբերդ» կինոթատրոնը, ասաց Բերդի քաղաքապետ Անդրանիկ Շառյանը, ապա մենք հավատացինք, որ այս հաստատությունը լայն առումով մշակութային օջախ կդառնա մեր քաղաքի եւ առհասարակ տարածաշրջանի բնակիչների համար: Բայց, անկեղծ ասած, հազիվ թե ակնկալեինք, որ այստեղ կկազմակերպվեն «Ոսկե ծիրանը», այսօր էլ համաշխարհային քաղաքակրթության օրրաններից մեկի կինոմշակույթի ցուցադրությունը: Շոյված ենք՝ շնորհակալ ե՛ւ Վիկտոր Հայրապետյանին, ե՛ւ բրիտանացիներին:

Փառատոնի բացման արարողությանը յուրահատուկ շուք հաղորդեց կինոթատրոնի սրճարանի հրուշակեղենի նորաբաց արտադրության անդրանիկ ստեղծագործությունը՝ կինոժապավենի պատկերով բոլորապատված հսկա տորթը, Վեստմինստերյան համայնապատկերով՝ նշանավոր ժամացույցով հանդերձ:

**Վիկտոր Հայրապետյանը** ցանկություն հայտնեց, որ բրիտանացիների կազմակերպած այս փառատոնը օրինակ ծառայի Հայաստանում հավատարմագրված մյուս դիվանագիտական ներկայացուցչությունների համար: Եթե նրանցից գոնե տասնմեկը եւս իրականացնեն նման միջոցառումներ, ապա Հայաստանի հեռավոր շրջանները ամեն ամիս հնարավորություն կունենային դիտելու մի պետության կինեմատոգրաֆիկ գլուխգործոցներ: Չէ՞ որ դա դժվար չէ անել, ասում է նա, անհրաժեշտ է ընդամենը մի քանի DVD ֆիլմեր եւ ցանկություն:

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ
Բերդ

# Հայկական կինոյի անդրանիկ «Հայակ» մրցանակաբաշխությունը մարտի 18-ին

Հայկական կինոպատմության մեջ առաջին անգամ կանցկացվի «Ազգային կինոյի մրցանախաբաշխություն», որը հավակնում է դառնալ հայկական Օսկար: «**Ազգը**» անդրադարձել է այդ մրցանակաբաշխությանը, որը միտված է զարգացնելու ազգային կինոարտադրությունը եւ բացահայտելու նոր անուններ: Անդրանիկ մրցանակաբաշխությունը տեղի կունենա մարտի 18-ին, ժամը 19-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում:



«**Ազգը**» զրուցեց Ազգային կինոկենտրոնի տնօրեն, մրցանակաբաշխության նախագահ **Գեւորգ Գեւորգյանի** հետ եւ տեղեկացավ, որ մրցույթի մասնակցության ներկայացված 103 ֆիլմերը՝ հեղինակների հայտցողությամբ առաջադրվել են 12 անվանակարգերում, որոնցից 36-ը ժյուրիի կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրվել են որպես մրցանակի հավակնորդ: «Կինոն խմբակային աշխատանքի արդյունք է եւ հարկ է, որ ֆիլմի ստեղծմանը մասնակցածները նույնպես գնահատվեն ըստ արժանվույն: Կինոն ցուցադրելուց զատ, փառատոներին մասնակցելուց զատ, ժամանակն է, որ հանդիսատեսը գնահատի այն մարդկանց աշխատանքը, որոնք ստեղծում են կինոն: Եվ դրա լավագույն ձեւը «Ազգային կինոյի մրցանակաբաշխությունն է», որով կարժեւորվի հայկական կինոյի ստեղծողների աշխատանքը: Քանի որ առաջին անգամն է, որոշեցինք մեր անկախության 20 տարիներին ստեղծված ֆիլմերը ամփոփել, իսկ հետո կանդրադառնանք ամեն տարվա ընթացքում ստեղծված ֆիլմերին»:

Բացի 12 անվանակարգերից, «Հայակ» արձանիկը կտրվի նաեւ «Կինոյում 20 տարվա ներդրման համար» լրացուցիչ մրցանակը: «Ազգային կինոկենտրոնի», «Ազգային կինոյի զարգացման հիմնադրամի» եւ Orange ընկերության հետ համատեղ իրականացվելու է այսպես կոչված հայկական Օսկար «Հայակ» անդրանիկ մրցանակաբաշխությունը: Մրցանակաբաշխությանը ժյուրիի որոշմամբ ընդգրկվել է վերջին 20 տարիներին արտադրված ֆիլմերի 90 տոկոսը: Իսկ դրանցից լավագույն երեքը՝ կներկայացվի եւ ինչպես ընդունված է, հանդիսատեսի ներկայությամբ կբացվի գաղտնի ծրարը եւ կհայտարարվի, թե այդ երեքից որ մեկն է արժանացել «Հայակ» արձանիկին: Իսկ երկրորդ եւ երրորդ տեղեր գրավածներին կհանձնվի դիպլոմներ ու հուշանվերներ: Միջոցառման ռեժիսոր Արամ Սուքիասյանը վերջին նախապատրաստական աշխատանքներն է անում: Ի դեպ, կոմպոզիտոր Երվանդ Երզնկյանը այդ մրցույթի համար գրել է հատուկ երաժշտություն: Ինչպես տեղեկացրեց պրն Գեւորգյանը, մրցանակաբաշխությանը մասնակցելու են հրավիրվել Կարեն Շահնազարովը, Արմեն Մեդվեդեւը, Արա Աբրահամյանը եւ շատ ուրիշներ ոչ միայն կինոաշխարհից, այլեւ տարբեր բնագավառներից ու տարբեր երկրներից: Ազգային կինոյի մրցանակաբաշխության հեղինակավոր ժյուրին գլխավորում է ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Գրիգոր Նարեկացի» նոր հուշամեդալ

ՀՀ մշակույթի նախարարի հրամանագրով հաստատվել է «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալ հիմնելու գաղափարը եւ հուշամեդալի նմուշը: Համաձայն այդ հրամանի՝ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալը շնորհվում է Հայաստանի Հանրապետության մշակույթի զարգացմանը մատուցած ծառայությունների, ինչպես նաեւ մշակույթի բնագավառներում ունեցած ստեղծագործական նվաճումների համար:

Մ. Մ.

# Որոշվեցին առաջին շրջանի հաղթողները

Երեւանում գտնվող Հայաստանի հավաքական թիմերի նախապատրաստության կենտրոնում ավարտվեց մինչեւ 18 տարեկանների հանդբոլի պատանիների եւ աղջիկների հանրապետական առաջնությունների առաջին շրջանը:

Առաջինը մրցասպարեզ դուրս եկան պատանիները: Պայքարի ոլորտը ներգրաված 7 թիմեր վիճարկեցին 2-րդ շրջանի 6 ուղեգրերը: Թիմերը բաժանվել էին 2 խմբի: Առաջինում ընդգրկված էին հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի (ՀՄԴ), Վանաձորի, Արցախի եւ Գյումրիի հավաքականները, 2-րդում մրցավեճի էին բռնվել Շենգավիթի, Աջափնյակի եւ Ալավերդու ընտրանիները:



Բոլորից հաջող հանդես եկավ եւ առաջին շրջանի հաղթող ճանաչվեց Վանաձորի հավաքականը, որը հաղթեց իր բոլոր մրցակիցներին: Մեկնարկում վանաձորցիները պարտության մատնեցին Արցախի (34-22) եւ Գյումրիի (30-16) հավաքականներին: 3-րդ տուրում ուշադրության կենտրոնում 2 առաջատարների՝ Վանաձորի եւ ՀՄԴ-ի հավաքականների մրցավեճն էր: Վերջինս մինչ այդ եւս 2 հաղթանակ էր տոնել Գյումրիի (34-8) եւ Արցախի (31-17) հավաքականների նկատմամբ: Նախորդ 2 տարիների ՀՀ չեմպիոնների մրցավեճն անցավ դիտարժան պայքարում եւ ավարտվեց վանաձորցիների հաղթանակով (32-27):

Մրցաշարային աղյուսակում թիմերը տեղաբաշխվեցին հետեւյալ հերթականությամբ. Վանաձոր, Աջափնյակ, ՀՄԴ, Շենգավիթ, Արցախ, Ալավերդի, Գյումրի: Առաջին 6 թիմերը պայքարը կշարունակեն չեմպիոնի տիտղոսի համար:

Մրցաշարի արդյունքներով կազմավորվեց Հայաստանի հանդբոլի երիտասարդական հավաքականը, որը կնախապատրաստվի Բելգրադում մարտի վերջին կայանալիք Եվրոպայի առաջնության խմբային մրցաշարին: Մեր հավաքականը կմրցի Բելգիայի եւ Սերբիայի հավաքականների հետ:

Մինչեւ 18 տարեկան հանդբոլիստուհիների առաջնության առաջին շրջանում հանդես եկան 4 թիմեր: Մրցակիցների նկատմամբ իր գերազանցությունը դրսեւորեց Շենգավիթի հավաքականը, որը 3 խաղերում էլ հաղթեց: Առաջին օրը շենգավիթցիները 35-17 հաշվով պարտության մատնեցին վանաձորցիներին: 2-րդ խաղում Հայաստանի գործող չեմպիոնը մեծ առավելությամբ հաղթեց Արցախի հավաքականին (25-5):

Առաջին տեղի հարցը որոշվեց Շենգավիթի եւ ՀՄԴ-ի հավաքականների մրցավեճում: Վերջինս մինչ այդ հաղթել էր Արցախին (35-15) եւ Վանաձորին (24-15): Վճռորոշ խաղում էլ շենգավիթցիներն իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին ու մրցակցին պարտության մատնեցին 19-15 հաշվով:

Աղջիկների մրցաշարի արդյունքներով էլ կազմավորվեց Հայաստանի հավաքականը, որը մարտի 21-ին մասնակցելու է Բուլղարիայում մեկնարկելիք «Չելենջ տրոֆի» մրցաշարին:

# Յուրի Շահմուրադովը պարգեւատրվեց FILA-ի մեդալով

Բելգրադում կայացած ըմբշամարտի Եվրոպայի առաջնության ժամանակ առաջին անգամ անվանի ըմբիշներ պատրաստած մարզիչները պարգեւատրվեցին FILA-ի հատուկ մեդալով: Այդ պարգեւի առաջին դափնեկիրներից մեկն էլ հայազգի անվանի մասնագետ, արմատներով արցախցի Յուրի Շահմուրադովն է: Պարգեւը նրան է հանձնել FILA-ի նախագահը:

Ներկայումս 70-ամյա մասնագետը ժամանակին 3 անգամ հռչակվել է Եվրոպայի չեմպիոն (1966, 1967, 1969-ին), 1970-ին դարձել է աշխարհի չեմպիոն: Նա ԽՍՀՄ հնգակի չեմպիոն է: Յուրի Շահմուրադովը 1972-1981-ին գլխավորել է ազատ ոճի ըմբշամարտի ԽՍՀՄ հավաքականը: Նրա ղեկավարությամբ ԽՍՀՄ ընտրանու ըմբիշներից 12-ը դարձել են օլիմպիական չեմպիոններ: Հետագայում անվանի մասնագետն աշխատել է որպես ԽՍՀՄ սպորտկոմիտեի մենամարտային ձեւերի վարչության փոխտնօրեն, զբաղվել է գիտական աշխատանքով:

90-ականների սկզբին նա կրկին զբաղվել է մարզչական աշխատանքով: 1991-1993-ին գլխավորել է Թուրքիայի, 1993-1995-ին՝ Իտալիայի ազգային հավաքականները, իսկ 1995-1996-ին՝ ՌԴ հավաքականի մարզչական շտաբը: 2002-ից Յուրի Շահմուրադովը Դաղստանի օլիմպիական նախապատրաստության կենտրոնի տնօրենն է:

# Մրցաշարում երկիշխանություն է

Հայաստանի շախմատի ակադեմիայի նախաձեռնությամբ Երեւանում անցկացվում է «Գառնի-2012» միջազգային մրցաշարը: Հայաստանը, Ռուսաստանը, Իրանն ու Ղազախստանը ներկայացնող 10 շախմատիստներ շրջանաձեւ մրցակարգով վիճարկում են գլխավոր մրցանակը: Մասնակիցներից ամենաբարձր վարկանիշն ունի միջազգային վարպետ Դավիթ Քալաշյանը (2418):

Կայացած 4 տուրից հետո մրցաշարային աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Ռոբերտ Աղասարյանն ու ղազախստանցի Դինարա Սադվակասովան: 2,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Արման Հայրապետյանն ու ռուսաստանցի Մաքսիմ Չիգաեւը:

Ռոբերտ Աղասարյանը մեկնարկում ոչ-ոքի խաղաց Տիգրան Հարությունյանի հետ, ապա հաղթանակներ տոնեց Պավել Դրուգովի եւ Պոուա Մարիի նկատմամբ, իսկ 4-րդ տուրում հաշտություն կնքեց Դավիթ Քալաշյանի հետ:

Դինարա Սադվակասովան հաղթել է Ռաֆայել Բակունցին ու Դավիթ Քալաշյանին, հաշտություն է կնքել Պոուա Մարիի եւ Պավել Դրուգովի հետ:

# Անդրանիկ Շահգելդյանը կխաղա «Ուլիսում»

Վերադառնալով Անթալիայից, Հայաստանի չեմպիոն «Ուլիսը» սկսել է անմիջական նախապատրաստությունը մարտի 17-ին Դիլիջանի «Իմպուլսի» հետ կայանալիք գավաթի կիսաեզրափակիչ հանդիպմանը: Եղանակային անբարենպաստ պայմանների հետեւանքով «Ուլիսը» մարզումներն անցկացնում է Մասիսի խաղադաշտում: Դրանց չեն մասնակցում երկամյա ընդմիջումից հետո թիմ վերադարձած 37-ամյա Արթուր Քոչարյանն ու Ալբերտ Թադեւոսյանը, որոնք վնասվածքներ ունեն: Ի դեպ, շուտով Քոչարյանի եւ «Միկայի» նախկին կիսապաշտպան, 17-ամյա Անդրանիկ Շահգելդյանի հետ «Ուլիսը» 1,5 տարվա պայմանագիր կկնքի: Նշենք, որ Արմեն Շահգելդյանի որդին մինչ այդ փորձաշրջան էր անցել Մոսկվայի «Դինամոյի» երիտասարդական կազմում՝ «Զենիթի» հետ ստուգողական խաղում դառնալով գոլի հեղինակ:

Բրազիլացի Արագոնեյ դա Սիլվա Սանթոսի հետ պայմանագիր կկնքվի կես տարով: Իսկ ահա վրացի կիսապաշտպան Գեորգի Մանծկավայի տեղափոխման հարցը հետաձգվել է մինչեւ ամառ:

# «Փյունիկը» ձեռքից բաց թողեց հաղթանակը

Դուբայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Փյունիկը» ստուգողական առաջին խաղում ոչ-ոքի է ավարտել մրցավեճը Արաբական Միացյալ Էմիրությունների առաջնության 1-ին խմբում հանդես եկող «Հաթթայի» հետ:

Հանդիպման սկզբում փյունիկցիները Կամո Հովհաննիսյանի եւ Էդգար Մալաքյանի խփած գոլերի շնորհիվ հաշվի մեջ առջեւում էին: Սակայն մինչեւ ընդմիջում մրցակցին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: 2-րդ խաղակեսում հաշվի մեջ նոր փոփոխություն չգրանցվեց:

## ՇԱԽՄԱՏ

# Ղարամյանը միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց հաղթողին

**Ֆրանսիայում ավարտված շախմատի միջազգային մրցաշարում հայ շախմատիստներից բոլորից հաջող հանդես եկավ ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը: Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր ու գրավեց 4-րդ տեղը: Տիգրանը միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց նույնպիսի արդյունքի հասած ու առաջատար եռյակում տեղ զբաղեցրած հնդիկ շախմատիստներ Պենտալա Հարիկրիշնային, Պարիմարջան Նեգիին եւ վրացի Տոմիկե Սանիկիձեին: Ընդ որում ավարտական տուրում Ղարամյանը սեւերով խաղում էր Հարիկրիշնայի հետ: Հաղթելու դեպքում նա կդառնար մրցաշարի հաղթող, սակայն հաշտություն կնքեց մրցակցի հետ ու բավարարվեց 4-րդ տեղով:**



**Տիգրան Պետրոսյանն ու Դավիթ Հարությունյանը վաստակեցին 6,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով Պետրոսյանը գրավեց 6-րդ տեղը, իսկ Հարությունյանը՝ 15-րդ: Ավարտական տուրում Պետրոսյանը հաղթեց Վասիֆ Դուրարբայլիին:**

**Զավեն Անդրեասյանն ու բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 6 միավորով գրավեցին համապատասխանաբար 30-րդ եւ 31-րդ տեղերը: Նույնպիսի արդյունքով Գեւորգ Հարությունյանը 37-րդ հորիզոնականը զբաղեցրեց:**

# Էդուարդ Կուրղինյանը ՌԴ քառակի չեմպիոն

**25-ամյա կրասնոդարցի սամբիստ Էդուարդ Կուրղինյանը հիանալի հանդես եկավ Պերմում անցկացված մարզաձեւի Ռուսաստանի առաջնությունում՝ նվաճելով երկրի չեմպիոնի տիտղոսը: Հաղթելով մրցակիցներին, Կուրղինյանը եզրափակիչում պարտության մատնեց Արսեն Խանջյանին ու 4-րդ անգամ նվաճեց ՌԴ չեմպիոնի կոչումը:**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ Տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչության ծրագրավորման բաժնի «ծրագրավորող» թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** ՀՀ կենտրոնական բանկում ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման նախագծում, մշակում եւ ներդնում: Ներդրված համակարգերի ուղեկցում եւ զարգացում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Տեխնիկական առաջադրանքի եւ մշակված մոդելի հիման վրա համակարգչային ծրագրերի (միջին բարդության համակարգեր կամ ենթահամակարգեր) մշակում:

Տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա համակարգի առանձին մոդելների եւ ենթակառուցվածքների մշակում:

Ծրագրային համակարգերի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում:

Համակարգերի նախագծում, հիմնված **SharePoint 2010** համակարգի վրա:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

Բարձրագույն տեխնիկական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում:

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ Ծրագրավորում (խորացված), ռելացիոն տվյալների բազաների կառավարման համակարգեր (խորացված), օբյեկտ ուղղորդված ծրագրավորում (խորացված), ծրագրավորում **SharePoint 2010** միջավայրում (խորացված), **SharePoint 2010** միջավայրում աշխատանքային պրոցեսների նախագծում **(sequential workflow, state machine workflow)** (խորացված), **NET Framework** (խորացված), օպերացիոն համակարգեր (միջանկյալ), ալգորիթմների տեսություն (միջանկյալ), մաթեմատիկական մեթոդներ եւ մոդելավորում (միջանկյալ), գլոբալ եւ լոկալ ցանցեր, ցանցային արձանագրություններ (միջանկյալ), հաշվողական տեխնիկայի կառուցվածքի իմացություն (ներածական):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

**Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2012թ. մարտի 28-ը**

**Աշխատավարձը՝ 220 600 դրամ (չհարկված)**

**Պահանջվող փաստաթղթերը.**

Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - **www.cba.am** Թափուր աշխատատեղերե բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում ): Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ **hrm@cba.am** հասցեով: Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (**www.cba.am**) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

***Հասարակայնության հետ կապերի ծառայություն***



## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Քարահունջ ՀԷԿ» ՍՊԸ-ն (ՀՀ Սյունիքի մարզ, Քարահունջի համայնք, 15/3) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ, Սյունիքի մարզի Քարահունջ համայնքում, «Քարահունջ» ՓՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի արտադրության սակագնի սահմանման հայտով:

**Առաջարկվող սակագինը՝ 19.551 դրամ/կվտ ժ առանց ԱԱՀ-ի**

**եւ 23.461 դրամ/կվտ ժ ներառյալ ԱԱՀ:**

**Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Քարահունջի համայնք, 15/3, (093) 995007**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի կողմից գրասենյակային կահույք արտադրող ընկերության հետ պայմանագիր կնքելու նպատակով կազմակերպվող մրցույթի**

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն հայտարարում է մրցույթ՝ գրասենյակային կահույք արտադրող ընկերություն ընտրելու եւ հետագայում ընտրված կազմակերպության հետ իր գրասենյակային տարածքի համար կահույքի պատրաստման եւ մատակարարման պայմանագիր կնքելու նպատակով:

Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 26 մարտի, 2012-ի ժամը 17.00-ն: Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 2 ապրիլի, 2012 թ.-ը, պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտ՝ 1 հունիսի, 2012 թ.:

**Մանրամասներին ծանոթանալու համար զանգահարել՝ 59-21-61 կամ 094-20-27-23:**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մարտի 01-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

**Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ԱՇՁԲ - 10/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել խորքային հորերից ՀԱԷԿ-ի ջրամատակարարման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու խորքային հորերից ՀԱԷԿ-ի ջրամատակարարման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2012թ. նոյեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել բաց ընթացակարգին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգի թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու պահից հաշված 40-րդ օրվա ժամը 12:00-ն:

Բաց ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 20000 ՀՀ դրամ գումարի չափով կամ համարժեք արտարժույթով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաց ընթացակարգի հրավերը տրամադրել բաց ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետևյալ հասցեով. Արմավիրի մարզ ք. Մեծամոր, վարչական մասնաշենք, մինչև սույն հայտարարության հրապարակման պահից հաշված 40-րդ օրվա ժամը 12:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետևյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, բավարար գնահատված և մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*«Հայկական ատոմային էլեկտրակայան»*
*փակ բաժնետիրական ընկերություն*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2251.36 | 1244 | 498,750,000 |
| 2 | Բոլյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 312.48 | 276.08 | 16,200,000 |
| 3 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.3 | 14,850,000 |
| 4 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 14,000,000 |
| 5 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 15,230,000 |
| 6 | Պ.Ս ակի փող. Թիվ 1/6 | կաթսայատուն | 137.08 | 137.08 | 6,400,000 |
| 7 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.5 | 195.5 | 9,867,000 |
| 8 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 32,895,000 |
| 9 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328 | 328 | 10,093,000 |
| 10 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 22,550,000 |
| 11 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 14,325,000 |
| 12 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.3 | 262.3 | 8,956,000 |
| 13 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161 | 161 | 11,466,000 |
| 14 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.8 | 12,668,000 |
| 15 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 19,591,000 |
| 16 | Բաշինջաղյան փողոց h.187/6, h.1 ԿՁՀ | կաթսայատուն | 297.49 | 297.4 | 17,100,000 |
| 17 | ԿՁՀ h.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.1 | 8,530,000 |
| 18 | Ադոնցի փող h. 3/2 | կաթսայատուն | 207.69 | 207.7 | 8,500,000 |
| 19 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.3 | 26,750,000 |
| 20 | Ա.Խաչատրյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 394.73 | 342.7 | 25,300,000 |
| 21 | Ադոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.8 | 218.6 | 19,630,000 |
| 22 | Ադոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.8 | 211 | 18,760,000 |
| 23 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.5 | 25,395,000 |
| 24 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.1 | 25,258,000 |
| 25 | Բաբաջանյան 143/3 | կաթսայատուն | 319 | 280 | 22,600,000 |
| 26 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,580,000 |
| 27 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 9,745,000 |
| 28 | Մաշտոցի 48շ 78 տար | ոչ բնակելի տարածք | | 7.5 | 1,850,000 |
| 29 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 5,000,000 |
| 30 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 5,350,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ մարտի 28-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ մարտի 28-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ ՊԸԾՁԲ -01/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ երկու չափաբաժիններով:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ախտահանման և միջատազերծման ծառայությունների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW. gnumner.am** էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 15.03.2012 թվականի ժամը 15:00-ն:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ ՊԸԾՁԲ -02/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ««**SRS Femida**» ծայնագրման հատուկ համակարգի սպասարկման ծառայությունների» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «**SRS Femida**» ձայնագրման հատուկ համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերումը

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW. gnumner.am** էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 15.03.2012 թվականի ժամը 15:00-ն:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՎ ԸՆԹԱՑՈՂ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -1/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արմավիր քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման ընթացքում առաջացած լրացուցիչ շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր» (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արմավիր քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման ընթացքում առաջացած լրացուցիչ շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW. gnumner.am** էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 15.03.2012 թվականի ժամը 15:00-ն:




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: